



Sahagaj Cath. D. D. 39.

2160-WR



ԵՐԸՆԵԼԻՈՅՆ

Theodosios
ԹԵՈԴՈՐՈՍԻ

ԸՆԴԴԵՄ

Majnaqoumatyoun
ՄԱՅՐԱՊՈՒՄԸՅՈՅՆ

ԼՅԱ այժմ նորահրատ տուրեցաւ բոց, և ըզբեղմնաբեր տունկս բանական դրախտին, ճշմարտուող աւետարանին համբալս համբացուցանել ճարակի, և զքաջուղէշ և զլիապատար հաւատոյն խայրիս Թառամեցուցանել նկրտի: Չեզասեմ, որդիք լուսոյ, մի տարփայք խաւարի, և մի զարտուղիք յարբայական պողոտայէն, և մի ստունդանէք չորեքտառեան աւետարանականաւանդ փողոցն՝ որք յերկնակառոցն վերակոչէն քաղաք զձեզ, և վատամիտ՝ յուլուԹք վերջանայք՝ ի քաջամարտիկ նախահարցն արդարահրահանգ հետեւանաց:

Քանզի ահա վերայայտեցան այժմ՝ ի տանս Թորգոմայ՝² նորածին դառնուԹե՛ զարմք, օցտողք ճշմարտուԹեանն. որք կաԹարոսք արտաքուստ երևին դուարենին զգեստօք, և խաչակիր մարմնակրուԹք, և ներկերպին գազանադէմք, խրԹնագգեստօք, խուճապողք, տգիտախողխողք, քծնաբանք, գաղտապատիրք, դողտրաբարբառք, ապաժուժախորհք, գժապանք: Որք անսարսափելի մտօք և անձնահանձար իմաստիւք ահա յաւակնեալք յարաձգին առ

1 Յօրինակին Հարաւիք:

2 Յօրինակին Բորգոմայ:

բոլորիցն արարող և համագոյիցս փրկող Ռանն ւ՛ծ. և 'ի թագէ տնօրինական կրիցն զմինն 'ի բաց կապտեն զակն հաւատոյն, որպէս զի զբոլորն ուրասցին զփրկականակն զկիրառութիւնն. կիսափրկումն մարդոյն աւազրելով մասնառուք դաւանիլ զփրկանակն Ռաննի զտնօրինակրութիւն :

Արդ չարահաւեալ զխորհուրդս իւրեանց՝ սկզբնականին մատենագրել այսպէս. Ոչ, ասեն, տկարութե՛ այլ կարողութե՛ յաղթեաց մարտի թշնամւոյն. իւրական վկայեն բանքն. « Ոչ աւարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կապի », Եւ եթէ այս շչմարիտ է, յայտ է, ասեն, թէ անընդունակ է առաջլծարդմանութիւն աւետարանին, որ յաղօթակայութեն զհազարտնութիւն պատմեն ամենակարողի Ռաննի նյ, և զի հրըշտակէն քաջալերելն :

Օ ինչ արդեօք այսպիսիքս կարծիցեն զիւրեանց ծայրակտոր իմաստան, աղէ ասասցեն մեզ մուրագիտ ազանդաբերքն : Մարմնական կիրառութեքն փրկական Ռան վարակեալ հերքեաց զթշնամին մարդկան, թէ մերկ ւ՛ծաբուն զօրութեքն. և թէ իւրական յատուկ բնութեքն՝ զինչ պէտք մարդոյն զգեցման. որոյ կամակարող հրամանին ոչ որ դիմակացիլ զօրեր : Ս յ զի ոչ զէական իւր բնութիւն 'ի փորձ հանդիսի տուեալ, այլ զիւրական մարմինն յաղթող արտի և ապականութե և մահու ցուցեալ, և մարմնական կիրառութե պատրեալ զթշնամին՝ 'ի գործ պատերազմի կոչեր. զի իբրև առ Մքամն մատուցեալ 'ի փորձ՝ որպէս յայ կործանեսցի պարտեալ : Վանզի ւ՛ծական անուամբն պատրեալ զնախկին մարդն բարիատեացն թշնամին, սակս այսորիկ մարմնոյն զգեցմամբ և յանձնառող զմարմնական կիրան փրկանակն Ռան իրագործելով, խաբեալ զթշնամին պարտեալ ամաչեցոյց, և փրկեաց մարմնականօքն զմարմնականս :

Արդ 'ի վեր կառու զաչս մտաց սրտիդ առ նախաստեղծ մարդն. և որ ինչ յաղագս պատուիրազանցութեն պատուհասակրեցաւ՝ իմանց զիւրաքանչիւրն : Եւ նախիմանց լեր զտէրունական օրինադրութիւնն. « Յամենայնսն վայելեսցես 'ի յոքնաբուսական տնդոցն.

բայց առ այդ մի հպեցիս փայտ իմացական բարոյ՝ ի չարոյ»։ Աստանօր ծանիր զերկիւղն սկիզբն ամենայն բարոյ և չարոյ, և որ ինչ ՚ի մարդու մն առ բնացեալն էին կիրք՝ և զնոյնս և բարեւտեղծողն անձ պատուիրանադրեաց :

Արդ երկիւղ ՚ի բնութիւն, և աներկիւղութի ՚ի յանձնիշխան կամեն իմաց : Յաղադս այսորիկ անդէն առ ձեռեալ օրինապահումն, զիւրական հաճոյիցն բարեխնամողն այ առ նա մեղադիր զմարդոյն առնելոյ զկամս : Իսկ նորա ինքնիշխանութի թիկնադրեալ զերկիւղ օրինացն, ուստի մեծափառութեան ցանկացեալ՝ յանհպելին մերձենայր փայտ ապարասանաբար, և գեղաղէշադիտակ զխայրին կապտեր յաւակնաղեղց : Իսկոյն ՚ի ճաշակէն ՚ի նախաղգեցիկն արտամերկանայր ՚ի փառացն. և ապա ներգործէր նմա յիշումն օրինադրին. «Յորում առուր ուտիցէք յիմացական խայրոյդ, ՚ի նմին մեռանիջիք յառուր » :

Ասկս այսորիկ յամենազիտէն այ երեսաց հարթուցեալ՝ սաղարթապատ եղանիւր. խօսափեալ՝ ընդ յաւետուղէշ տնգովքն հրաժարել ըղձանային ՚ի մահահրաման պատուհասողէն : Գարձեալ ՚ի հեզահարցումն դատողին յուսակնեալ՝ անգիտակ զմի արդեօքն կարծեցին ՚ի չհրամայեալ խայրին հպեցար : Տիրապատճառեալ աղեղնաբանէր, և զկողամարդն ցուցանէր առ ՚ի խայրիոցն ճաշակման. իսկ նա զարբանեակ չարին : Իսկ արդարագիտողն անձ զիւրականն վերածեաց զճշմարտութիւն : Աշտամբեր զկամաւոր սխալանսն նոցա և զապերախտութիւն. պատուհաս նախկին՝ զցաւօքն ծնանիւն առաջատարփին. երկրորդ՝ զանիծագրութիւնսն տայր ամայավայել բուսաբերին ². երրորդ՝ երկիւղն քրտնաբերքն. չորրորդ՝ մահադարձ հողանալն : Յորմէ սարսուացեալ վրդովէին ամենայն բանականացն սեւք. և հրճուանայր տիրակարծ իշխանն մահուն :

Իսկ անսկզբնագոյ սղորմութեցն անձ բարեգորովեալ ՚ի վճատեալսն նկատէր նպաստատու օրինա-

1 Յօրին . խառնախալ :

2 Յօրին . գարնամայեալ բուսաբերիւր :

դրուածք փարախել զցնդեալն : Ս երայայտեաց արս արդարս . առաքեաց մարդարէս անձաբարոզս . մակա նեաց զապարասանն զանազան հարուածովք : Յետ այսորիկ ամենայն վարժից՝ զանմահ՝ ՚ի տեսականու Թէն տարիայր մահկանացուիս փրկիլ ազգ . վայր իջեաց յանպարագրական ծոցոյ Հօր էական Րանն . անմահական բնութիւն և անսկզբնական էութիւն եր տաղաւարեցաւ ՚ի ծննդական ՚ի սք կուսէն . և ան պարատեղի բնութիւն պարունակատեղէր իննամեայ ժամանակաւ ՚ի համբարականի կնոջ, և զերկնայինն ոչ Թողոյր Թափուր տեղի . սաղմնաուեալ միացաւ ընդ մերաստեղծակ բնութե մարմնոյ, որպէս ինքն կամեցեալ գիտաց անձառաբար : Ոչ զիւրն ստեղծ բնութի, այլ զմերն առստեղծեալ միացոյց իւր մար մին : Ոչ էրն փոխեաց, և ոչ զեղևն շփութեաց, այլ բնութի միացոյց ընդ մերումն, անբաժանաբար մնա լով ՚ի նմին անձն Րան բովանդակեալ զյարգանդին բնակիլն : Սորկից մարդկան ծնաւ ՚ի կուսէն անա պականաբար . և զցաւոցն ելուծ զգատակնիք, իմն զծննդոց փրկող . և կիրքն անախտք պատուհասառող կրիցն :

Րնկալ զբաղցն կարօտացելոյ դրախտին վայելից յագուան . զվաստակն՝ տարժանեցելոյ յերկնս և տար փողի առաջին անաշխատելի կենացն՝ հանգիստ . զծա րաւն՝ պապելոյ ըղձման աղենաբուղիս աղբերն ար բուան . զքիրտն՝ անիծիցն քրտանն բարձուան . զեր կիւղն՝ մահուանն երկիւղին ազատումն . զչարչարանն՝ չարչարանացն փրկումն . զմահն բարձողի կենացն փայտի՝ անմահութի . զյարուածին՝ սկզբանն կարօ տեալ՝ լինելութե դարձումն . զհամբարձումն՝ զկնի պահպանութե պատուիրանին խոստման ծանօթու Թեան :

Պարձեալ իմաց ՚ի մեզ երախտագործեալ փրկա նակն Րանի զմարդն եղանիլ : Աւ զի մի ոմանք պի տակապէս վարկանիցին զմարդեղուի ան, և ոմանք սոսկ մարդ ծնանիլ ՚ի կնոջ, յայտ առնէ՝ զճմարիտն լինել մարդ ՚ի կուսէն անձ բացայայտելով գիտաս .

ցուք, ընկալեալ զարգացումն հասակի մարդ վերայայտիւր մեզ զինքն : Ատեցող զչար՝ տղայն, և ընտրող զբարին ըստ Եսայեայ, վկայէ անձ ճշմարիտ գոյ. բարոյիւր դիւանունդ լինել՝ զԱրկիոնի սանձեաց զաներասանակ բերանն, որ առաջքն դաւանէր զլինելն մարդ : Իսկ ՚ի կուսական ՚ի ստեացն ցնդել զկաթն՝ զԱմոստացւոյն ցամաքեցոյց զգժընդակաբարբառ զլեզուն. որ չնորհագործ որդի անուանէր, և ոչ զՌանն անձ՝ մարդ լեալ դաւանէր :

Բաղցեալ ՚ի փորձարկութի անապատին, ստուգապէս զինքն վերայայտելով մարդ : Փորձախտին հարցագիտութի կոչաւորութե բացայայտելով զոչ իմացականն գիտակ առնել զնա, և զնախապատիրն ամաչեցուցանել յոյս. որ զառ ՚ի Ռանէն կենագործութիւն ոչ գիտէր մահացելու մն լինել. այլ ճաշակմանն մահածութի միայն հրճուանայր սխալմանացն սադրիչ :

Աստակեցաւ իսկապէս. ինքն գիտէ՝ փորձագործութի վկայեալ զեղանիլ վասն մեր մարդ : Եւ զի զնա զնոյն՝ անձ ծանիցուք, տիրաբանեալ ասէր, «Առ իս հետեւեցարուք, տաժանեալքդ, և ես հանգուցից զձեզ» :

Երաւեցաւ արդարապէս. և ինքն գիտէ մերով պիտաւորութիւն ծանուցանիլ զինքն գոյ մարդ ճշմարիտ : Եւ զի զնա անմահութի իմացուք աղբիւր, ծարաւականացն պարգևել ասաց կենդանի ջուր, և վտականալ աղբերց անմահականաց ՚ինայն հաւատացելոց իբրև ՚ի ճշմարիտն անձ :

Տրտմեցաւ ճշմարտապէս, որպէս ինքն գիտէ, կատարեալ վկայելով զինքն տնօրինացեալ, բանական ունելով զոգի և զմիտս : Եւ զկիսամարդն դաւանողաց կարկեաց զբերանն. և զնախաստեղծին մահածաւանդութեն եբարձ զսուգ : Երկեալ ՚ի մահուանէ, որպէս ինքն գիտէ, ճշմարիտ յայտնելով մեզ զինքն եղանիլ մարդ, և զԱնիկեցոցն ընդբերանեաց զլեզուն. որք ստուերակերպութի նաւթէն զմարդելութի նորին փրկանակն Ռանի :

Յայսմ տեղուջ ընդգճեալ դիմամարդք ճշմարտութեն՝ ճառ արկեալ յեղանակէն. Երկիւղ, ասեն, ոչ է ՚ի սկզբնեղութի բնաւորեալ, և ոչ է այ գործած,

այլ վերջապարուկ ներգործեալ յարանայ յախտ :
 Արդ ո՛վ որոճողք ստուծէցն , զմէ՞ մուրրիք 'ի բոլո-
 րիցն արարողէ , և զսահմանեալ ճառագորուծիւնսն
 վրդովալից գործականութիւնք փութայք կատարել .
 քանզի որպէս ձերունդ վկայեն ճառք , ախտիւ առ-
 լնուք : Այլ ո՛վ յամառողք , 'ի նախարարութեանն
 իմացարուք բարեգոյակ ստեղծեալ կամս և անձնիշ-
 խանականս , ընդ նմին բնաւորեալ և երկիւղ տիրա-
 փառական :

Արդ որպէս յարգարճնկալ կամացն ինքնատիրու-
 թեամբ արտազանցեաց , նմանունակ և մահճնկալ
 պատուհասիւ՝ բնաւորականաւն զարհուրեցաւ եր-
 կիւղիւ : Վանզի ուր եկամուտ ներգործի երկիւղ ,
 անդ արուծի ոչ անուանի : Ասն զի քաջութիւն է՝
 զբնաւորականսն փոխագործութիւնք պարտել , զայն՝ որ
 իւր կամաւորութիւնք ընդ բարւոյն բնացաւ :

Աստի եթէ ոչ ընդ բնութենն առգոյացեալ էր եր-
 կիւղն , զիմրդ անբնականաւն զարհուրէր . կամ՝ որ-
 պէս բարեխտեղծողն անձ՝ զոչն ընդունակ՝ պատուհա-
 սակոծ առնէր , թէ « Արկերուք 'ի տնէ այ ձերմէ » :
 Աղէ զարհուրեցո՞ դու զտունկ , վրդովեցո՞ զգետս ,
 հայցեաց բարեգործուի առ 'ի նոցանէ . յայտ է՝ թէ
 ոչ հնազանդին . վասն զի ոչ է 'ի նոսա բնաւորեալ
 յասացելոցդ : Արդ իմն՝ զերկիւղն բարւոյ առիծ-
 լեալ : Արկիւղ 'ի տեառնէ՝ պատիւ տն . երկիւղ 'ի
 մահուանէ՝ արդարութե գործարան : Բայց մի ինձ
 աստ զանյուսուծե ներածցես զերկիւղ , ո՛վ դու , այլ
 զբնաւորականին :

Վանզի յերկաւուր նախասացութիւնք պատմեաց վե-
 րակենցաղիլ 'ի փրկանակն Բան : Արդ եթէ ոչ եր-
 կեաւ առեցելովն , յայտ է՝ թէ և ոչ մարդացաւ . որ
 պէս Սանիքեցիքն վկայեն : Այլ եթէ 'ի նախասացե-
 լոցդ ոչ յանձնառեաց , ապա ոչ ունէր բանական ոգի .
 որպէս կիսադաւանն ասաց Մպաւղինար զաւոգիկեցի :
 Գարձեալ՝ թէ ախտ ներածես վարկանել յերկիւղն ,
 սակս էր ոչ 'ի քաղցն և 'ի ծարաւն և յընդունելուի
 կերակրոցն նոյնպէս վարկանիցիս . քանզի մեզ նմանի
 քաղցեալքն և ծարաւիքն ընդ հաշանօք անկեալ
 տժգունին , և պակասին առ 'ի նոցանէն ուժեղու-

Թիւնքն . . . ¹ իսկ առլցեալքն մարմնական պիտոյիւքն՝ առուգացեալք յօրանան , և տոչորի՝ ՚ի նոսաբոց ախտիցն : Իսկ փրկանալն Ռանի ոչ այսպէս կիրք . քանզի յաղազս մարմնաւորութեն բացայայտելով զինքն գոլ ճշմարիտ մարդ , զբնականան մեր առաջի արկեալ՝ քաղցեալ և ծարաւեցալ , անընկալ՝ ՚ի հաշանաց և մաքուր ՚ի մեղաց՝ անծն Ռան մերառեցելովն . քանզի ոչ գործեաց զանօրէնութի , պիտաւոցէ մարգարէն , և նենգութի ոչ գոյ՝ ՚ի շրթունս նորա . այսու տարացուցիւ իմասցուք զերկիւղն :

Ըրդ ամենեցուն բացայայտ է , եթէ մահճանցաւ նաց ընծեռեցալ պատուհաս . իսկ անծն ² Ռանի ոչ ինչ գործեալ դատապարտական , սակս էր մեռալ , եթէ ոչ մահուամբն իւրով մահուն գործեաց մահ : Իարձեալ ՚ի մերում մահուանն ապականուի և եղծումն գործաւնի . իսկ անծն Ռան մերառեցելովն մահացեալ , անապական և անմահ մնաց նովին մարմնովն : Բանզի զմեռանիւն ստուգապէս՝ հիւսանիւն կտաւովն և ՚ի տապանի ներծածկիւն վկայեն ճշմարտութեն . ³ և ՚ի զինահարիւն բխումն արեանն՝ պիտաւոցէ ըզկենդանին մնալ : Բանզի ոչ զէականն իւր բնութի , այլ զտնօրինեալն արտաիչեաց ոգի . անքակ և անբաժին մնացեալ ՚ի բանական ոգւոջն անծն Ռան ՚ի նմին մարմնի բնութեն :

Ըրէ ասացեն մեզ անճնահանճարքն , և ճշմարտութեն անիմայք . երկիւղ ՚ի հրանիւթ բնութեն անմարմին հոգեղինացն բնաբար առգոյացեալ է , եթէ վերջաբուսակ ախտակրին . և եթէ ոչ բնաբար , զիարդ անդրլակի փառատրեն զէականն անծ անընդալքն ⁴ երկիւղն : Ըպա եթէ ՚ի գոյեղունէն առլցեալ ունին զերկիւղն , ամենից բացայայտ է՝ թէ անախտք են : Ուստի ամենայն անկարութեն սկիզբն արտայայտեցալ աներկիւղութիւն , որում նախկին բանսարկուին պիտաւոցէ անկումն , և երկրորդ՝ նախծին մարդոյն : Իսկ եթէ զառ ՚ի բարւոյ միայն վարկանիւթ ունել զերկիւղն , նովիմք իմասցուք և զառ ՚ի չարչա-

1 Յօրին . բառ մի անընթեռնելի :

2 Յօրին . յանծն :

3 Յօրին . ճշմարտութեն :

4 Յօրինակին անընդալքն :

բանացն : Ս ասն այսորիկ արուածի անուանի քաղցիւ քաղցի համբերել , և երկիւղիւ երկիւղի :

Ոչ զարհուրի , ասեն , գրկնկալ մանուկ . յայտ է ա սեն , թէ եկամուտ բաղկանայ երկիւղ : Ար քեզ ա սեմ , որ զծաղրականսդ բարբառիս . նա բանաւորու թին ոչ ապաքէն ընդ սկզբնեղուծէն առնացեալ է 'ի մարդունն . սակայն թերահասակ մարմնոյ գոյա ցուածք ոչ զօրեղանայ քնարգել բան , այլ զխժական բառ երգէ ձայն . նմանապէս բաղկացեալ իմասցիս զերկիւղ . և մի յաւէտաղիւղաջեալ զանգիրսն բար քառելով յախմարացն յագաչմունս : Ոչ որ տաժա նեալ յերկս՝ արիւն վիժաբրտնի . և եթէ մարդում , ասեն , ոչ բաղկանայ , զիարդ արդեօք զՏի Որդւոյն այ իշխեսցէ որ զայս բերանաբացել : Արդ , խօլացեալդ 'ի չարափառուծեղ , յումէ՞ լուար զանբնակ գոր ծոյդ լուր . գրունն աւետարանին որպէս արեան ա սաց տարացուցաբանուծք քիրտն , այլ ոչ թորունն անզինահար արեան :

Արդ կաճառք բանիցն յուղեալ՝ դարձեալ վիճա բանին : Առաւիի ճառագրեալ աւետարանական տա ուիցն պատմութիւք անմիաբան 'ի միմեանց գտան . յու րոց զմին ընտրեալ դովեսցուք , և զմիւսն հերքեալ արտաքսեսցուք 'ի սրբունն կոչարանն : Քանզի բազ մերգելին Ղրիգոր առաքելաբարոզ նահատակն Քի զամենայն աւետարանական պիտառութիւնն ճառա գրեաց՝ զոր ինչ յաղագս այ Քանի՜ տնօրինական կի րառուր պիտառէր . իսկ զահաբրտնիւն և ոչ յատուկ ձայնիւ յիշատակեաց . ուստի յայտ է , ասեն , եթէ հնապատմութի աւետարանին ոչ է ընդունակ : Աւ եթէ որ քան զնախաբարոզն Ղրիգոր խորհեսցի լի նել իմաստուն , և այլ ինչ նորաձեւեսցէ ճառել , այն պիտին դատապարտեալ է ասեն :

Արդ ով խաբողորսակ թշնամիք , ներբողելով ձեր զճշմարտաբարոզ վկայն Քի զյոզնեղանիկն Ղրի գոր՝ սրտաղաղակ բանիւ սփածանել մերկուէն ծած կոյթ , դովին այդու բանիւ՝ ցուցից յայլունն տեղոջ՝ բամբասանս յարդարեալ ձեր նախագրուատին Ղրի

1 Յօրինակին ա, բան :

գործի , այլ ոչ գովեստ . քանզի որթողքսական վեր-
 նադիտող քնագգեստ նախահայրքն գումարեալք
 'ի Նիկիապողիս՝ կանոնադրեցին երկակի հնգեակ՝ և
 եզակի քառեակ թուով միայն՝ 'ի սրբունն կոչարանին
 ընթեռնուլ թուղթս զնձաքարող առաքելոյն Պա-
 դոսի . և 'ի նորապատում գրութէն զնոյն շարագրու-
 թիւն վերառեալ է : Իսկ բարեգրուատելին Պրիգոր
 զառ 'ի հարցն լռեալն և ոչ մակադրեալ 'ի նոր
 թարգմանութիս , վկաբանութի ճառագրեաց , թէ
 Մնորէն իշխանն իբրև նձանալն կամեցաւ , ասէ մա-
 քուր Մաքեալն , զամենեսին ընդ մեղօք գրաւեաց .
 և այս 'ի հնապատումն տառնն վերատառեալ է , այլ
 ոչ 'ի նորապատում շարագրութէն :

Մքգ եթէ սակս ոչ գծագրուէ՝ 'ի նորաբեր թարգ-
 մանութեցն հնագում աւետարանին իբր զոչ Ճմա-
 րիտ 'ի բաց ընկեցեալ մերժեսցի յեկեղեցւոյ , ընդ
 նմին խտեալ բամբասի և մեծ մակադիտօղն Պրի-
 գոր ստուերաբանութի գրուատեալն 'ի ձէնջ : Մպա
 եթէ Ճմարտապատումն Պրիգոր ոչ ըստ համօրէն
 աւետարանական կարգաբանութի գլխոցն բաղդա-
 տեալ շարագրեաց , այլ յատուկ պարզմտութի ըստ
 ախմարացն լռելութի բաւել զառժամայն պիտոյիցն
 սակաւամանութի վկայութիս առաջի եղեալ մար-
 գարէական տառիւք հաստատեր , արդ զմէ՞ անփապ
 լինիք զնմանէ պատճառադրութի : Մշէ 'ի յիշումն
 եկեսցէ ձեզ իսկապատում տարմաբանիցն գործա-
 դրութիւնք՝ զոր ինչ յաղազս նօրին բանի հետե-
 եալ են :

Ուստի նախկին յօլովից գօլով հայր Ճմարտասէր
 անձանց՝ տէր Րարսիլիոս կապադովկացի՝ ոչ 'ի վտանգ-
 ինչ աղամայից ճառեալ , այլ գեր 'ի վերոյ զառողի-
 կեցոյն երթալ Մպողինարի կշտամբէր , որ կիսամառ
 նութիւնն դաւանէր զտնօրէնութի փրկական Րանի .
 Աս զչարջարանն , ասէ , և զտրտմութիւն և զզօփալն ,
 և որ ինչ միանգամ սոցին կցուրդ յաւետարանականն
 կայ , նայ Րանին ասեմ . և ոչ բնուէ նձուութեն , այլ
 միաւորութեն :

1 Յօրինակին էռալի 444էալ :

2 Յօրինակին 444գրութի :

Սորին զուգասողակից և որ՝ մահանուն՝ Վրիգոր անծաբանն արժանաւորեցաւ կոչիլ, առ եւնոմիացիսն ճառեալ ասաց. Օ խօսելն և զղարհութիւն յաղագս քո թափեցելոյն իմաց տնօրինաբար: Վարձեալ յերկակեռակի յեղում ճառի զամենայն տնօրինականսն լուծականութիւն յեղանակեալ՝ յեղակին հնգետասան թուականութեանցն ազատաբանեալ ասաց համառօտաբար, թէ Նշ քրտնելն արեան ցուցականութիւն յաղագս մեր չարչարեցելոյն ծաներուք: Վարձեալ ՚ի յաստուածայայտնութե ճառին մահադրեալ ասաց. Մտ որում քաղցեաւն և վաստակեցաւն և արտասուեաց և երկեաւն օրինօք մարմնոյ:

Սմին համասօղ և երջանիկն Յոհանն Կերբողանունն ոսկերեբանն՝ կարգաբանութիւն զաւետարանական թուեալ բան. Որպէս զի մի կարծեօք անուանեսցի մարդեղութիւն յանձն Ռանի, սակս այսօրիկ ստուգապէս աղօթէր առ Հայր ՚ի կոհակին ձիթեանեաց. և քրտնեալ թուրէր յորդահոսակ առուս որպէս սպացուցի արեան իջման:

Համաձայնակից գոլ սմա և արդարածերն Նպիփան կիպրացի. Մարմնաւորապէս իմացարուք, ասէ, զհաբրանութիւն, և մի սոսկ հոգեպէս. իսկ զառ ՚ի հրըշտակէն զօրանալն՝ զմովսէսականն իմացարուք աւարտել զօրհներգական մարգարէութիւնն, երկրրպագել նմա Որդւոյն նոյ, և ուժեղացուցանել զնա հրըշտակացն նոն: Օ անուանական զօրութիւնն վսամաբանութիւն փառաւորել՝ մաքուր սպասաւորաց զօրութիւն անուանեաց, զնորայն գովաբանել ՚ի վերայ մահու գտիրականն², և զգժոխոցն լուծանել զպետութիւնն:

Մրդ գու, ո՛վ յօղաբան և զրայահուր³, իբր գերաթուեար մտացաթե հանձարով բան զերկնագուշակ⁴ նախահարսն, որք հիմունք եկեղեցւոյ և խարխիսիք ճշմարտութե անուանեցան, որոց պահապանք՝ հրըշտակք, և զօրավար՝ ինքն նոն. որք վկայեալք

1 Յօրին. զուգասողակից և մահանուն: 3 Յօրինակին զբացահար:

2 Յօրինակին ՚ի վերայ մահս զտիւս: 4 Յօրինակին զերկնագուշակի:

խան:

յաղաքս Քրիստոսի նահատակեալք, զլիափառեցան յառաքելական աստիճանին : Այսպէս թէ եօթն¹ հարիւր ամլիեալ յետ չարչարանաց Արդւոյն Աստուծոյ . և այսքան ժամանակք յանգիտութեան քնացին բոլոր մանկունք եկեղեցւոյ . և միայնարդ ևս 'ի վախճան ժամանակաց նորուք դուք և նորածանք գտայք ճշմարտութեանն, երկրորդ ապաւղինարիտք . որ նորաձայն աւանդութեամբք նորածին բուսուցէք արմատոց դառնութեան փուշ չրաճարակ անշիջատոջոր բոցոյն :

Արդ հիմ վարիք զարտուղի խորհրդովդ . եկայք ընդ մեզ խոստովանեսցուք զառ 'ի կուսէն ծնեալն անձն ՚Բան՝ ճշմարիտ առեալ մարմին անփոփոխ աստուածութիւն, անյեղոյեղուկ միութիւն, անորիչ անձնութեամբ, և եղակի դէմ . անբաժ 'ի կրից, անապական մարմնով, մաքուր 'ի մեղաց, անեղծ 'ի չարչարանս, և չարչարեալ իսկապէս : Այլ անմահ բնութիւն, և մեռաւ ճշմարիտ մերունական մարմնովն . աներկիւղական անձնութիւն, և տրտմութիւն զանգիտեալ 'ի կամաւոր չարչարանսն մերառեցելով հոգւովն : Աղբիւր կենաց գոլով բնութիւն, և ծարաւեալ ստուգապէս մերառեալ մարմնովն : Բոլորիցս արարող, և ոչ վաւտակեալ ըստ մարգարէին . և 'ի միօրեայ պողոտայնոց սամարացոց վաստակեալ հանգչի մերատոհմակ տեսական :

Համագոյիցս եղելութեան անկարօտ դարմանիչ, և քաղցեալ ստուգապէս մերակերպ առեցելովն : Այստարօղ և անբովանդակելի բնութիւն, և 'ի գիրկս բովանդակեալ մերահասակ տղայութիւն : Այլ երեւոյթ անսկզբնութիւն, երեւեցաւ մերագոյակ մարմնովն . անեղ անբնութեան մշտնջենաւորութիւն, սկիզբն առեալ մարդեղութիւն, և ըմբռնեցաւ մերանիւթ բռնութիւն : Սա ոչ պակաս 'ի մերոց կրիցս, և անախտ . սա ոչ նուազ անձնութիւն, և անմեկին անօրինեալ բռնութիւն . սա ամենից կամաւորութիւն համբերեալ տալաւ, զի բոլորումն գործեսցէ փրկութիւն մարդոյն : Ստորա զանձնական դաւանեսցուք բնութեամբ, և

1 Յօրինակին եզեալ էր 2 . փոխանակ դնելոյ 2 :

զոնօրինականս կամաւոր յանձնառու թեամբ : Օսա
բարեբանեացուք զօհացողական երգասողութեամբ :
Փառք Տօր էականի , որ զմիածինն իւր առաքեաց 'ի
փրկութի աշխարհի . փառք Համագոյակցին , որ վս
մեր մարմնացաւ . փառք անսկզբնակից Տօգւոյն , որ
ես զմծգիտութիւն որդոց մարդկան : Փառք միա
անական սբ Երրորդութեն յաւիտեանս . ամէն :

ՆՈՐԻՆ ԵՐԸՆԵԼԻՈՅՆ

Թ Է Ո Դ Ո Բ Ո Ս Ի

ՃԳՆԱԻՈՐ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ
ԵՒ ՎԱՐԴԱԳԵՏԻ

ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ
ԵՒ Ի ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ
ՄԵՐՈՅ ԵՒ ՓՐԿՉԻՆ ՅԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ

Օ ԱՅԱԻՈՐ և զանքններն խորհուրդ անհասու
թէ արփիահրատ անձային սք նշանիս, ո՛վ
անձատէրք, դուն ինչ սղական բանիւք արտայայտեալ
ներբողական և պանծալի ճահողասաց խորհրդով,
հոգեպարզ և անծիմաստ շնորհօք կենդանագրելով,
համառօտաբար հրատարակեցից յոքնօրինական յու
սով ենթադրութիւնս ՚ի Վ՛ս: Եկայք ամենեքեան ուղ
ղափառ հաւատով և ուռթիւ ստորասացութիւն եր
կիր պագցուք գերահրաշ անձային սուրբ խաչիս, ՚ի
սմա բեւեռեցելոյն բազկատարած շարամերձութիւն և
անսակի տնտեսութիւն էական բնութիւն ՚ի անինն ան :

Որ զնախադասական ապացուցութեանցն զմակ
երեւուի բաղադրեալ հոգիաների և մարմնաքնար եր
գողին, ՚ի վաղնջուց հետէ հաւեալ ձայնէր՝ զսերկա
ծին էակն զի վերայ փայտին բաղադրական գերա
ծութիւնս՝ արտաչնչացեալ անողելի ինքնակայունն,
ձիրելով ՚ի վերայ հեթանոսաց նշան և լոյս երե
սաց, անստուերական իրակեալ ներգործիչ անձ ելով
Բանն : Ոչ իբր որումն պատուական գոյից նիւթից
երկնայնոցն առեալ՝ առ մեզ ժամանեաց զհաւաս

1 Յօրին. գարածութիւն :

տուութեն զենթադրուի զենանիլ 'ի վերայ մահաբեր փայտին՝ առթելով զնոյն փրկուէ օճան՝, զնիչ գերապանծ փայտին գիտութե, որցեալ յանապակ և յանուշակ մշտնջենաւոր և յանվախճան ուրախութիսն երկնաթուիչ հաւատով 'ի Վս, այլ 'ի վեր քան զսեռական էիցն գերազանցեալ վսամական վեհագուհիցն իմանալի մակացութեց իմաստիցն՝ յանպարագրելի և յանպարիմանալի անձային խորոցն ելով դաշնաւորութեան ընդ փայտին սեւեռամամբ, զթշնամիսս իւր զմեզ՝ համայն իսկ և զամենայն աշխարհ յինքեան բաղարկեալ, արգահատութեն տեսողական տառիւքն առտուեալ զնոյն, անանջատելի միաւորութեն առկացոյց առաջի Տօր :

Եւ զարտամերկացեալն 'ի լուսաւոր այ ձեռացն ստեղծեցելուսն աներկիւղական բնութք և անձնիչ խանական կամօքն՝ անձական անուամբն պատրեալ բարիատեաց և ռեմակալ թշնամոցն, 'ի ձեռն մերա կերպ առեցելոյ մարմնոյ զգեցմամբն՝ ներգործելով փրկական Վանին, կապտեալ ամաչեցոյց զհակառակամարտն, և փրկեաց անձախառն խայրին 'ի վերայ փայտին ախտական առբերութեն՝ պատսպարեալ միշտ յարատեակ ընդ հրաբուն հոյսն՝ կաճառաճեմ էիցն բազմադասելոցն :

Եւ ետ ընդ ետ վերտարեալ սեւեռագոյն և մակասիր ենթակացութեն, տիպատեսակ անշիոթելի բնութք անութեն մակադրեալ 'ի քառեակ փայտն, զտնօրինեալն արտաշնչեաց հոգի . զինահարեալն 'ի տիգաբուխ և վտակահոս կենդանուէն, 'ի մեզ գոյով աղբեւրն ջրոյ խաղացելոյ յաւիտենին կենդանութե :

Վանզի անչնչացեալ մարմինն՝ ստուգապէս պիտառութեն կենդանատեսակ անձացեալ մարմնոյն, և երկախումբ ներմարդութեն, դիտապետական իշխանութն 'ի բացորոշութեն աղատ գոյով 'ի մեռեալս՝ սակս կարծեալ երկիւղին մահու ունակութե, ընդ մեզ եղեալ ան Վանն, ինքն անջատի որոշմամբ յերկուս տեղիս, արտաբերեալ յորջորջմամբ, և առտուեալ զանձն 'ի ձեռս Տօր . վասն զի իւր էր տնտեսաւ

կանն՝ ընդ որում անշփոթ բնաբար ներմիացեալ և խառնեալ շարայարեւուքն ըստ որումն բանի : Քանզի անյեղօրէն և անքատակ՝ է անծահրաշ ներանձնաւոր մարմինն, և տղաբար կանոնաւ բովանդակի և չափի :

Օ նոյն պատկանեալ նոն յաւետարանին ասէր, «Վշխանուի ունիմ առդնել զանձն իմ, և իշխանուի ունիմ միւս անգամ առնուլ» : Արով և անդ ախտակրեալ շնչովն առ ՚ի դժոխսբնակ մարդկան շունչն հիւսանի լէ մեզ առասնակաց, և ՚ի տապանի ներծածկիլ մարմնում, ՚ի մարմնածածուկ ներքնագոյն դժոխս, վերաւ կենցաղեալ կենդանացոյց միահաղոյն զամենեսեան իջմամբ առ դարապետական արգելեալ հոգիսն . և ռահ գործեալ ՚ի նմա ՚ի ձեռն լուսածին գերապանծ նիշխայտին : Յորում լուսաթուիչ սերօրէին ՚ի գիշերին այն պատահեալ կանանցն, վերաբերէր առ նոսա քարոզութիւն զխաչեցելոյն ասելով, «Օ ի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս», որ բնաբար առասուծքն ձիրեաց զկենդանութիւն անկակացս :

Արոց և խայտացեալք ընդ ընծայական շնորհադրուատ բացատրութիւն զուարթնոյն, առ ընդհատ եկաւորութեն խաչեցելոյն զյարուի . ուստի և զնոյն իսկ զգաւանութեն ունակութիւն անվթար և սուրբ հաւատով ուրցեալ՝ յանձն ճշմարիտ, աստանօր ու գեալ արտասանեցից արփիահրաշ և քրիստոսազարդ նբ նշանիս :

Ո՛վ ճշմարիտ անծային տունկ, արևելաբոյս արմատ ընծիղեալ սաղարթածաղիկ և կենդանատեսակ զօրութիւն, իմանալի պտուղ, անբան կենդանի, քառաթև նշան, անբարբառ բարեխօս զքէն կախեցելոյ Ռանին նոյ : Ար փոխանակ նախկի տնկոյն, որում սաղարթախիտ պտղովն վայելացեալ, չքնաղազարդ տեսակաւն գունեալ, զարմանագեղ և առոյգ գեղեցկութե տեսչալի փափաքմամբն, կամակ և ախորժելի առ ՚ի տարփումն տեսողացն հայեցուածովն՝ յօրինեալ, յաւետաբեր շէշտակի արգահատութեն զկենդութի

1 Յօրինակին անփանկ :

3 Յօրինակին ուրաղեալ :

2 Յօրինակին ախփակեալ :

4 Յօրինակին հայցոսածովն :

առթեցեր, դառնուլթիւնաբեր ելով բուժկուլթէն, առգիտաբար դաւորուլթք պատիր պտղովն կաղակարծելի բաժամտուլթքն, ամայացեալ տարատողմամբն արտակացելոյն յածաստեղծ և յանճաւելի փառաց անձուհին :

Ո՛վ ճշմարիտ անձային տունկ, նախաբոյս և ինքնադոյակ կառուցմամբ պատկանեալ, սորեկ պտուղ, և ետածին ժամանակաւ ձևացեալ քառատեսակ տք նշան, և անբարբառ բարեխօս զքէն հեղուսելոյ անմահ Ռանին անյ : Որ իբր ՚ի ձեռն միոյ մահո՛ւ միահաղոյն բաղձաձաբար անմահ ստացեալ՝ խաւարամուլթ և նսեմացեալ շամանդաղուլթք աղջամղջով ստուերամածեալ, փանաբի անքատուլթքն տարալածեալ, տարապատկանուլթք յանձատեսակ արարչատուր փառաւորուլթէն ունակ եղեալ յանցանաց նախահօրն, իսկապէս և զնոյն կերպատեսակ նմանուլթիւն ստացեալ զմահացելոյ ծառային անանջատելի սիրովն, բոլոր ՚ի Արրորդուլթէն և անորիչ ՚ի ներմարդուլթէն՝ յարահիւսեալ ՚ի վերայ քո մեռանի անտղաբար արտաշնչուլթքն կենդանին՝ կենդանուլթի շնորհելով բնակին եղակի ¹ բնուլթք անձուլթքն :

Ո՛վ ճշմարիտ անձային տունկ, գերադրական և իմանալի տնկագործուլթէն խորհրդոյն ապաստուլթ, խորուլթի և անխանաւթ քառաթև տք նշան, և անբարբառ բարեխօս զքէն բեւեռեցելոյն անմահ Ռանին անյ . որ նախ քան զբուսանել փայտին ՚ի մէջ խորացելոյ աղխափակեալ դրախտին հրասրեալ սուսերօքն՝ ՚ի սրբէապահ բոցեղինացն պարունակեալ ճանապարհ ծառոյն կենաց, յաւետաբար միշտ և գերագոյնս ինքն զքեզ տեսանելով, անդուստ ամենատես աչաց տեսական Ռանին անյ, և անուանեալ ծառ կենաց, առբերելով ՚ի քեզ պտուղ կենդանուլթք՝ անորակ ներմարդուլթն միաւորեալ բնուլթի անձուհին մեռանիւր զմահ վասն մեղաց, սակս անձագործելով զմեզ զի թէպէտ և համաբնակից ² այնր տնկոյն և անսուրբ

¹ Իմն, եղական՝ աննման՝ անտեսակ մարդկուլթէն :
պատմիւր, կամ միաւորեալ ՚ի մի ² Եօրին . ճահաբնակից :

փայտին առանակայ առկոչեցեալ, յորում պատ-
 ճառք մեղացն 'ի ձեռն պատիր պտղոյն ճաշակմանն
 եղև մահու առիթ . իսկ որպէս և այնր իբրուելոյ
 ահաւոր զօրութի բեռեցելոյն հեղուսեալ 'ի վերայ
 քո ճշմարիտ կեանք և պատճառք փրկութե , արտա-
 բերեցեր զյաւիտենական արդարութիւն մշտնջենա-
 ւորութե չօր յաւիտենից :

1576-200 ք

Ո՛վ սքանչելի փայտ , և անձազարդ տապան , իմա
 նալի խորհուրդ ծածկեալ , քառաթև սուրբ նշան
 և սկիզբն սևեռից սերման մարմնացեալ անմահ Ռա-
 նին այ . որ զկենդանին անմահ Ռանն անձ ելով կակա-
 նութեն սպասաւորեալ 'ի քեզ յառաջագոյն , այն որ
 խօսէրն առ 'ի յօրինադրել զնիւթական արկածեալ
 օրէնն , զկենդանաբեր տապանին զփայտն վայրանցեալ
 էր բարձր և 'ի վերայ գեղման , և շարացեալ տնօրի-
 նաբար բաղդատութե անտղելի և անձառելի միաւո-
 րութեն , հեղուսեալ ընդ քեզ իւրով գերակ ' բար-
 ձրութեն : Վերագոյնս 'ի ծփական և 'ի ծովացեալ
 ալեաց մեղաց զ'ի քեզ օժանդակեալ ոգիսն օդա-
 զնաց սլացութեն թեթևս թառուցեալ մերձ առ եր-
 կինս վերաբերեցեր , ապականելով զհնութի ծերութե
 եղծման ազանց , սուզանելով յանդունդս կորստեան
 քանակի կասմանն . յորում զմարտը և զվճիտ դուռն
 տերունոյն բերանացուցեալ այս ինքն զտիգահարեալն
 'ի զինուորէն , իբրու ըստ իմանալի բացելոյ ձեղուանն ,
 մեծաբարբառ գոչմամբն 'ի ձեռն չօր աւանդեաց
 զհոգին . յոյժ տպաւորագոյն քատակութեամբն փո-
 խօնակ աղանոյն , կենդանասաղարթ դալարութեն
 շղաբերի , զընտանեգոյն կարութիւնն , հանգէտ և
 հաղորդ երևեալ չօգին տք . անձամբ ընդ անձինս՝
 իբր 'ի տապանի պահանութե ոգւոյն , այս ինքն ար-
 գելելոցն 'ի դարապետացն դժոխոց , զինդութի առ-
 թելով հրախառն արեան 'ի քեզ ցայտեցելոյ խաղա-
 զագործիցէ յերկինս և յերկրի :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ , անձակերտ և իմանալի
 սեղան , երկնակառոյց յառաջաբերութեն անմահ
 զենման Որդւոյն այ կամաւոր պատարագին . վասն զի

1 Յօրին . 4 էնալ :



ի քեզ տեսանեմ զձե՛ծ Րանն մարմնով բաղկացուածքն գոյացեալ, փոխանակ Խաճակայ արտաշարեալ՝ ընդ փայտին ենթադրուածք. հնազանդ հօր և ծառայ մերատոհմ կերպիւ, և առաջնորդ յերկնաւոր ուրախութեցն բնակուածին. քանզի բեւեռեալ իբր ՚ի սեղան ՚ի վերայ քո փոխանակ անբան կենդանւոյն մատուցեալ ողջակէզ անարատ և զենումն անբիծ, ոչ զմի անձն Խաճակայ, այլ համօրէն իսկ զամենայն աշխարհս փրկագործեալ կենդանացուցեր:

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, անձազարդեալ իմանալ լի սանդուխք յերկրէ յերկինս բարձրացեալ զնոյն ինքն զՐՅՊ պայծառ ճառագայթիւք ջահափայլեալ արփիակիրն փայլմամբ, զարեգակն արդարութե ՚ի քեզ պսակ ունելով հաստատեալ առբերելով զփրկուածի ամենայն աշխարհի. ըստ որում նախկին տեսեալ զքեզ ո՞րքն Յակովբայ ճանապարհ վերելելոց յերկինս առ հայր, և դուռն երկնից անուանեալ իջելոց դասուց կաճառացն հոյակապ, և գումարտակ ժողովոյն երամ երամ իջելոց հրեշտակացն յերկիր՝ առ միութի վերնոց և ստորնայնոց, հրաշաշաւիղ և կատարեալ ուղեկցուի զկնի անձային ձայնին թռուցեալք լուսատեսակ կերպիւն առ ճշմարիտն էից կայ, ՚ի վերինն բրաբրոն յանձակեաց աշխարհն:

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, անձազարդեալ իմանալ լի գաւազան սուրբ հովուին, և պատճառ ծնելուէ ստեղծատեսակ հոգւով առանց մարմնոյ և արեան յաւէժաբար գոլով. և ոչ իբրև զօրինակն յամսն և ՚ի ծոփն, կամ իբրև զմեծախորհուրդն՝ որ առ Յակոբայն, յորժամ դնէր զգաւազանն ՚ի ջուրն աւազանին յանդիման խաշանցն առ զկծելոյ նոցա՝ ի ձեռն գաւազանացն և ծնանելոյ խաշանցն գորշախայտս և սպիտակս և խայտախարիս. այլ մշտնջենաւոր յաւէտ յարաձգական տեղութե կանգնեալ աւազան իմանալի և հոգևորական օթոց փրկութե և կնիք ամբութե, անմահ ելով կենդանագրութե բանին արտասանեալ ճշմարտութե յոյժ գեղեցկապէս և հրաշափառագոյն. յաւէժառատ և վտակահոս անձային

1 Յօրինակին արաւարեալ:

աղբեւրն՝ ի քեզ ցայտեալ ահաւոր սրսկմամբն, բեւեկ նակայծակ հրաաալից արիւնն և ջուրն ՚ի բերանացելոյ երակէն հոսեալ, արտամերժելոցն և մերկացելոցն ՚ի փայտէն դատապարտութե, լուսաւոր և անապական ծածկուութից, և համայն առնուին թափանցանց ՚ի միասին եղեր կնիք և գործարան և վերստին ծնունդ բանաւոր ոչխարաց :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, անձաներկ դրոշմն, զէն և կնիք հրատեսակ պարծեցելոցս ՚ի քեզ սրամխեալ արեամբ Որդւոյն նոյ, որ փոխանակ դառնազէն արիւնաշաղխ արեամբ դրոշմեալս զսեամն որդւոցն Իսրայելի, միանգամայն առ հասարակ եղեն զերծեալք ՚ի բարկութե անձային սրոյն : Իսկ դու, ո՛վ ահաւոր և վսամարիի անձային նշանի զօրութի անպարտելի, պատկեր և կնիք ՚ի դէմն ամենից հաստատեալ, յորում զահաւոր զհուրն և զլոյսն ՚ի քեզ ներպարունակեալ անանջատելի ներգործութեք Որդւոյն նոյ, ճշմարիտ կեանք և հրախառն դրոշմ հրասրեալ աստուածամուկ արեամբ Որդւոյն նոյ, միանգամայն իսկ և հրագունից հրաճնունդ սեռական էիցն, և ստորնայնոցս էակացս եղեր պատսպարան և պաշտպան :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ և հրաշատեսիլ գաւազան, արեւափառ նշոյլք, լուսածին և արփի ճառագայթ, ամենազան և պէսպէս գունակ գունակ զարմանազանեալ, որ փոխանակ գաւազանին որ ՚ի ձեռն մարգարէին՝ որում զհպարտացեալ ամբարտաւանութի եգիպտական սատակմանն տանջեալ պէսպէս և ազգի ազգի հարուածովք. այսքան երկոտասան սքանչելոք հրատարակեալ յոյժ հարկաւորապէս բունադատութեք ցնորականօք վրիպեալք, խազմական վրդովիւն տոչկեալ չարչարեցեր ջնջելով զլիշատակ նոցա մինչև ՚ի սպառ. համանգամայն իսկ և զանմարմին Փարաւոնն, որ խրոխտացեալ բարձրավզութեք, ինքնահաճոյ հպարտութեամբն զբողեալ ՚ի խոշ և ՚ի գոգս քանակաւոր սահմանաց :

Ո՛վ սքանչելի սք փայտ և ամպատեսիլ սիւն կայծակնաբորբօք ճառագայթիւքն պայծառացեալ ՚ի յերկրի. ճանապարհընթաց և առաջնորդ ուղղութե բանականին անձատեսակ ընտրողութե Իսրայելի՝

յաւետապարզեւ երկիրն աւետեաց, ընդ քեզ միացեալ յարակայ 'ի կեանս բնաւորական լոյսն . քեզ հետեւեցելոյ՝ առաջնորդես յածակերտ խորանս անչափելոյ Երրորդութեն . ուստի և 'ի վաղնջուց հետէ տեսեալ զքեզ մարգարէին, ոչ միայն սիւն այլ և սեղան և տաճար և լեռուն ըստ որումն մարգարէի :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ և անձաբուղի աղբեր, քեւ բացելոյ երկալտակ բղխմամբ 'ի կողէն կենդանութի բեւեռեցելոյն 'ի վերայ քո անմահ Նանին անյ, որ 'ի նիւթական և յանմաքուր հոսանուտ դառնաբեր կենացս՝ ցամաքեալ յածային հոսմանէ ուղիւիցն վայրաբերականութի, սողոսկեալք վիժածական ծորմամբն և տաժանեալք եղերական սգովն 'ի ձեռն փայտին դառնութի, յոյժ տենչալի զարմազանութի և գերարփի ծագմամբ գերարկեալ զճաշակումն ջրոյն դառնութի՝ քաղցրութի երևեցար 'ի Սեռա, ազգմամբ գրոյն տրամիտ և ախորժ և արբուն գործեցեր :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ անձազարդեալ կերպարան և տուող օրինադիր հաւատոյ, կենդանութեան հողոյն անձախօսիցն նկարագիր և անբարբառ բարեխօս պարծելոցս 'ի քեզ . զի թէպէտ և հիւթանիւթ հողոյ ընծիւղեալ ածանցականութի արտաբերեալ, և համանունաբար անուանեալ փայտ պիտակապէս ըստ միոյ եղանակի, այլ սակայն զանազանեալ 'ի միւս կողմանէ՝ ըստ քառից յեղանակս տրամադրութի 'ի վեր քան զմիտս և զհասումն՝ մակադրեալ ընդ քեզ շարամերձութի, այն՝ որ խօսէրն 'ի Սինայինն և օրինադրէր զօրէնսն հրատաբորբոք և միգավառ մառախղամուտ խաւարան, եռանդնակայծակ հրալից արիւնուտ ահաւոր հուրն իջեալ 'ի վերայ քո, յոյժ բիւրապատիկ տեւողական արգահաւտութեամբ՝ պահեցար անկեղ . ուստի և նոյնագոյակ հուրն այն՝ որ անշփոթելի բնութիւն բորբոքեալ խօսէր 'ի մէջ բուսածին թփատեսակ և փշադաժան մորենւոյն ապացուցութիւն՝ խորհրդովն վայրիջեալ յանպարագրական ծոցոյ հօր, անպարագրելի բնու-

Թի՛ն իջե՛վանեալ ներտաղաւարեցաւ 'ի համբարանի կուսին , անկեղակարծ և անթառամ պահելով զերկաքանչիւրոցն զքնուԹի՛ս . հարկաւորապէս և կամաւորաբար ըստ արժանի փառաւորուեդ՝ խոնարհեալ երկիր պագանէր . քեզ ամենասուրբ կոյսն և մայր ծնելոյ փրկչին մերոյ զքէն կախեցելոյ անմահ Ղանին այ :

Ո՛վ սքանչելի փայտ սուրբ , անձազարդեալ անձեռագործ տախտակ և կենդանագիր ընդ համագոյ ՆորորդուԹէն , յորում նկարագրեալ 'ի քեզ ճշմարտուին , և զմեծի լուսոյն զխորհուրդն առդրելով , որպէս յիմանալի քառանալի քառանկիւն և վիմարդեան տախտակս տպաւորեալ 'ի ձեռն չքնաղատես առնն այ , ոչ տանբանեայ մատամբ տառ ձևացեալ , այլ մշտնջենաւոր և յաւեժաբար տեղողուԹի՛ք զնոյն ինքն զան Ղանն անպարագիր գծաւորուԹի՛քն . հեղուսեալ իբր 'ի տախտակի՝ անջինջ գրով ամատենաբանեալ շնորհեցեր :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ , անձազարդեալ իմանալի պատկեր արքայական քառաթև սուրբ նշան , կենդանատեսակ զօրուԹի՛ն , որ իբրու բուսանելով յերկրի՝ բարձրացեալ ծայր արձակեցեր ընդ քառատեսակ ձևացեալ անկիւնս երկրի , առբերելով 'ի քեզ զերկնաւոր անմահ Թագաւորն . անկասկած յապականողէ օձէն , յորժամ խաճանէր զգումարտական ժողովն գումարումն բանակին հակաճառեալ ներհակուԹի՛ք ընդդէմ հարկանող օձիցն , լուծանելով զխայթոց մահաբեր օձին , այս ինքն զանմարմին Թըշնամոյն : Օ՛ի Թէ առ հնովն և օրինակաւն յոյժ հարկանէր զխուժախումբ և բաժամիտ ժողովն , բժրչկեալ լինէին 'ի սահեցող գոյացեալ անշունչ նմանուԹի՛ն . որչափ ևս առաւել հրակայծակս արիւնախառն սիրալի ահաւորն հուր 'ի քեզ մերձեցեալ՝ հաղորդելով և մկրտելով 'ի մահ , մարմնով մեռուցչին՝ մահու , բժշկելով կենդանական անմահուԹի՛քն 'ի սեւաԹոյր և 'ի խաւարաբորբոք անիծեալ օձին դառնուե՞² զ'ի քեզ հայեցողս հաւատացեալս :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ անձազարդեալ , իմա-

1 Յօրին . Քրտոցիլն :

2 Յօրին . գառնուեալ :

նալի թագ արքայական, քառաթև սուրբ նշան և անբարբառ բարեխօս զքէն կախեցելոյ անմահ Ռանին ւնյ . որ զկենդանի անձավայելուչ իրագործութիւն՝ աստուտ անաստեղծ մարդոյն քողասուզեալ խորամանկութիւն մախանօք բանսարկուին՝ առժամայն աղաւաղեալք ՚ի կենդանատեսակ լուսոյն, և անկեալք ընդ մեղօք մահու, առաւել բիւրապատիկ արգահատութիւն տնօրինեալ անուշիկ զքեզ ինքեան բարձեալ ամենեցուն թագաւորն ՅԾ՝ փոխանակ Յե սուայ, այս ինքն զգայխոնական զթագաւորեալ զմեղսրն բաղեալ ցասամբ բարկութիւն, մինչև ՚ի կատար ընթացից արեգականն, նշան յաղթութեան պարտեցելոյ թշնամոյն ՚ի վերայ կանգնէ . որպէս և օրինադիր բանն ազգէ կոչեցեալ, երկձիղ կախէ ըզփայտէ :

Ո՛վ սքանչելի սուրբ փայտ, իմանալի թագ արքունական, նախաձայնեալ զքեզ հոգիաներկ երգողին, յորում բարձեալ զահաւոր և զպայծառ զքեղազարդեալ զգլուխն զՌԾ, պէսպէս զարմազանութիւն փայլեալ ՚ի սահմանս կատարելութեան ծայրի քո՝ մեծապէս բերկրանօք տարփողական տենչմամբն փափաքեցելոյն՝ ակումբահոյլ դասախումբ ժողովոյն ՚ի քեզ հաւատացելոց՝ և միանգամայն երկնի և երկրի զփրկուի առթեալ տրամադրեցեր . վասն որոյ և ազգմամբ հոգւոյն զքեզ մարգարէն՝ ոչ միայն թագ, այլ և պսակ փառաց յարահիւսեալ ՚ի գլուխ քո յաւեժ մշտնջենաւորութիւն, ընդ քեզ միացեալ յարակայ ՚ի կեանս սակս պսակելոյ զսուրբսն ւնյ : Ռստ նմին բաղդատութիւն քատակի և Ռմաստունն արտաբերեալ զքեզ ետ ընդ ետ՝ առանակայ ունակութիւն արտասանեալ առադրէր դստերացն Նրուսաղեմի ելանել և տեսանել պսակեալ ՚ի մօրէն ՚ի գլուխ արքային Սողոմոնի, յաւուր ուրախութեան փեսայացեալ անմահ Ռանին ւնյ : Նա արդ թէպէտ և հիասրաշափառազոյն և յոքնուտ տպաւորեալ ՚ի քեզ աստանօր խորհուրդ ներմարդութեան եզակի բնութեան Ռանին աստուծոյ, ո՛վ անձային նշանի ահաւոր զօրութիւն, սակայն զթիւ վաթմնիդ գլխաւոր մեծ խորհուրդ իմանալի և բարձրագոյն ըստ երկոտասան ցեղինն Ռա

րայելի բաժանմանցն, իբրև ընդ կենդանոյ ընդքեզ խօսեցայ :

Ո՛վ քառատեսակ սուրբ նշան, կենդանի փայտ և ձայն բանաւոր, սրեալ արեամբ Որդւոյն Կրօնական զի քեզ ծանեաք զճշմարիտ արքայն Սողոմոն Տանդերձ վաթսուէն զօրօք պահպանութեամբ էիցն՝ ըստ թուոյ Տինգ զգայութեցս, որով պիտակացեալ արտաքսեսցուք տարապականութի՛ք գործովք փայտին իմացութե՛ք բարւոյ և չարի : Վրև լուծեալ բարձաւ քրտնաբեր անիծադրութի՛ն Ղաւմայ, որ ՚ի ձեռն Տինգ շարադրեալ՝ ազդեցուէ, և մոռո՞հարուածոցն մախանօք : Վրև խայտառակեցաւ օձ աւազակն, և բացաւ դրախտ՝ մարդ աւազակին : Վրև բացաւ սրովբէափակ աղիւեալ դուռն դրախտին կենաց : Վրև կապեցաւ կարծեցեալ իշխանն պետութեց խաւարի : Վրև հորդեալ դիւրեցաւ եւթնաձորոյն ճանապարհն ըստ Եսայեայ :

Վրև ազատեցան վտարանդեալ ոգիքն ՚ի դառն մահուանէ : Վրև նորոգեցաւ ճանապարհ ծառոյն կենաց . « Ես եմ՝ ճանապարհ և ճշմարտութիւն և կենսք » : Վրև թուուցեալ ընթանան համարձակապէս ագեալ հոգիքն զՎրօ : Վրև բացաւ դուռն յարութե ննջելոց սբք : Վրև ցնծայր հրեշտակապետն աւետարանելով կանանցն խաչեցելոյն զյարութի : Վրև ուրախացան դասք առաքելոցն՝ քարոզելով աշխարհի զփրկութի : Վրև նորոգեալ եղև երկին նոր և երկիր նորոգայարդար, և ամենայն որ ՚ի նոսա երևելի և աներևոյթ արարածք : Վրև լուսաւորեալ պայծառանայ կաթուղիկէ սուրբ եկեղեցի :

Վրև զուարճացեալ խրախուսելով պարծի Սիոն վերինն Երուսաղէմ : Վրև բերկրեալ խնդայ աւմուռն որդւովք հանդերձ՝ ծննդեամբ սուրբ աւազանին : Վրև լուսաւորեալ ուրախանան ժողովուրդք հաւատացելոց ՚ի Վրօ : Վրև դաստիարակին անձազգեաց տղայերամ մանկունք սուրբ եկեղեցւոյ : Վրև զգաստանան երիտասարդք և կուսանք՝ հանդերձ

1 Յօրինակին շարժարեալ :

2 Յօրինակին հօդ :

բազմահոյ ծերովք : ՎԻ՛կ պարծին կուսանք խստամբ
բերողաց, բնակեալք 'ի լէրինս յայրս և 'ի քարա-
ծերպս վիմաց : ՎԻ՛կ գրոշմեալ անձակերպ միութիւն
կնքին ելից և մտից մերոց զգայարանք : ՎԻ՛կ օրհնին
բազմատեսակ նմանութիւն խորանաչէն յարկք սուրբ
եկեղեցոյ : ՎԻ՛կ բաշխի փրկական մարմին և արիւնն
'ի վերայ քո պատարագեալ : ՎԻ՛կ արժանացեալք
կոչին յօծումն քահանայութեան անարատ և անբիծ
նմանութեան քահանայապետին Վ՛րտի : ՎԻ՛կ պսակեալ
հրճուին փեսայացեալ հարսունք 'ի սուրբ եկեղե-
ցոյ : ՎԻ՛կ կերակրեալ առատութիւն լիապէս բուծա-
նես զամենակարօտ սովամեղ քաղցելոց անձինս :

ՎԻ՛կ լինին բժշկութիւնք տարժանամեղ հիւանդու-
թիւ վճատեալ հոգւոց և մարմնոց : ՎԻ՛կ հրաժարին
ննջեցեալք յաշխարհէ մեծապարծ ուրախութեամբ
յանձակերտ խորանան, առհաւատչեայ երանութեցն
անմահական կենացն հանդստեանն 'ի Վ՛րտ : ՎԻ՛կ
կնքին գերեզմանք մեռելոց՝ հաղորդընծայ սաղմոսա-
նուագ և հրեշտակախառն փառաբանական ձայնիւ
մատուցանեն զերգս միութարիչ սուրբ հոգւոյն բա-
րեխօսութիւն անմեռունչ հեծութիւն 'ի Վ՛րտ : ՎԻ՛կ փայլէ
միւսանգամ դալուստ Որդւոյն Մատուծոյ, անձառե-
լի ծննդեամբն՝ արևելանշան ճառագայթիւք անձա-
տեսակ մարմնովն : ՎԻ՛կ բանան գերեզմանք մեռելոց
և յառնեն 'ի մահահանգիստ քնոյ : ՎԻ՛կ տանջեալ
'ի միասին առհասարակ դատին ազգք հրեիցն անհա-
ւատից : ՎԻ՛կ ցնծան դասք աջակողմանն պարծելոց
'ի քեզ՝ թուոցեալ ամպովք ընդ առաջ ան երկնա-
թուիչ հաւատով 'ի լուսազարդ տերունակայանս յեր-
կնաւոր բնակութիւնն 'ի Վ՛րտ Զ՛րտ 'ի տէր մեր :

ՄԻ՛կ քեզ իմոյ արտագրութեան բանից պտուղ, ո՛վ
անձային սուրբ նշան, և անձակերտ իմանալի անբան
կենդանի, և ձայն բանաւոր : Ոչ ոստ ձիթենւոյ ոլում
պիականս ծաղկեալ մատուցանեմ առաջիքո, կամ
բոլորեալ պսակս 'ի հնդկային քարանց պէսպէս զար-
մազանութիւն գունեալ. այլ բանս մշտնջենաւոր և յա-
ւէժաբար ընդ քեզ բաղդատեալ անձատիպ ունակու-
թիւն, ըստ ձայնի հոգեհոնուագ անձահօրն Վալթի, որ
բաղկացեալ գերագանցութիւն սիրանալով ունէր ըլ-

քաղցրութիւն 'ի քիմն , այսինքն զանձային բանն , աւաւել քան զմեղք բերանոյ . և կամ թէ ըստ այլում հոգեկրի ումեմն զհրամայեալն 'ի տնէ ծասկեալ մանր զմատեանն , և վերաբերել ճշմարտութե՞ զկենդանի զբանն , որ այնքան ընդ քաղցրութիւն գրոյն հիացմամբ զարմացեալ պատմէր . ուստի և զնոյն աստուածատեսակ բանին ճշմարտութե՞ զիմաստս զոր ունէի դուն ինչ 'ի շնորհաց հոգւոյն սթջ ընծայեցի քեզ , սուրբ նշան , 'ի սկտեղս խանթից զտառագծա կան արտադրութիւնն՝ իբր 'ի քառեակ տրապիզիս զՔսի փրկութե՞ն ապաստով խորհուրդ :

Քանզի շուրջ եկեալ 'ի խորհուրդս անդաստանի մտաց իմոց , իբր 'ի չքնաղ և 'ի սքանչելատես աստուածատունկ դարաստանաց , քաղցի ըստ իւրաքանչիւր մարգարէական ուստոց զերևեալ պտուղն կենդանութե՞ 'ի քեզ առբերելով . մանաւանդ սակս ահեղակերպ և սոսկալի աւուրն երևելոյ , յորժամ փայլես երկնախումբ զօրօք և լուսաւոր և անճառելի լուսով զ'ի քեզ հաւատացեալս՝ յանքանակ և յանչափ ուրախութիւնն անձակայ կենաց լուսոյ ճառաքայթիցն 'ի վերնաքաղաքամայրն Արուսաղէմի , միշտ անդադար գեղապարութե՞ ընդ անմարմին հոյլնն՝ լուսաճեմ կայճառացն խրախուսելով հանգիտաբար և յաւեժական հնչմամբ պարակցեալ , հրեշտակախառն օրհնու՞ք 'ի պսակահամբար՝ կիտին բոլորեալ պսակօք՝ զեռաթուեան և զեզակի լոյսն աչալուրջ երեսօք համարձակապէս տեսանելով , հրաշառ հրաշջահավառեալ յերկնալոյս ուրախութիւնն , որ է համաբնակ և անանց տէրութիւն 'ի Քս Յս 'ի տէր մեր , որում փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

1 Եօրինակին սպակահամբար :

ԵՐԸՆԵԼԻՈՅՆ

Թ Է Ո Դ Ո Ր Ո Ս Ի

ՄԻԱՅՆԱԿԵՑԻ

ԳՈՎԵՍՏ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԵՒ Ի
ՄԻՇՏ ԿՈՅՍԸ ՄԱՐԻԱՄ¹

Օ ԲԱՆԱՒՈՐ և գներանձնեան տաճար սքանչե-
 լադործութե ամենաբարեձև կարգաւո-
 ըութի և վայելչակազմութի զարդարեալ երկնից բնա-
 կողին, զմաքուր և զպարկեշտասէր առաքաստ հարս
 նութի փեսայացեալ Սանին հօր, զՄարիամ կոյս
 անձաճին համաբողորապսակեալ հաւատով սբ Նոր-
 ըորդութին, ընդհանրական առաքելաչէն եկեղե-
 ցիք Քրիստի, փառատրողական երգաբանութի հոգե-
 զուարճ նուագարանօք՝ վերագոչեսցուք ՚ի սերկեան
 աւուրս դասախմբութի. վասն զի յայսմ աւուր ըն-
 կալան մեծարգոյ աւետիքն բողորաբնակ տիեզերք :
 Քանզի հօր հաւասար Սանն անձ՝ հօր համագոյա-
 կից գոլով և յինքեան զհոգին կենաց, ծնաւ այսօր
 ՚ի Քիթղէէմ, արքայաշէն քաղաք Սաւթի : Ա՛յ զի
 ի Քիթղէէմ թարգմանեալ կոչի ըստ երբայեցւոյն՝
 երգուին իւր : Յաղագս որոյ յանձն իւր երգուաւ

1 Թէպէտ և զառաջիկայս ճառ
 դտաք մակագրեալ յանուն Թէո-
 գորոսի, բայց երկբայիմք թէ խառ-
 նեալ իցէ ընդ ոճ բանից Թադէո,
 սի ուրումն, որ սիրէ կազմել ստէպ

բառս եռաբարդս և քառաբարդս,
 և ածանցս ծանրաբարդս. զի դի-
 բաւ մարթին շփոթիլ անուանքս
 Թադէոս և Թէոգորոս :

անսուտն յեռութե՛ն նախագուշակ մարգարէութիւն ;
 և հաստատեալ կատարեաց զբանս ծառայից իւրոց ,
 և զխորհուրդս պատգամաբեր հրեշտակաց արդա-
 րացոյց :

Այսօր աւետալուր և ուրախաբեր ձայն հրեշտա-
 կապետին առ կոյսն Սարիամ կարապետող վան-
 գիւք տարահնչող ձայնեալ ընդ բոլոր համատիեզերս
 ամենայն , թի՛ « Դնաւ ձեզ այսօր փրկիչ , որ է օ-
 ծեալ տէր 'ի քաղաքի Գաւթի » :

Այսօր մեծ խնդուի ամենայն տիեզերաց . քանզի
 բացաւ դուռն արեւելեան աստղանշան ճանապար-
 հան մոգս հանելով ընծայաբերս , երկնաւոր հրեշ-
 տակաց արքային մատուցանելով ոսկի արքայական՝
 ինքնահողաբուսակ արուեստահնարագործութիւն մաք-
 րազտեալ և գունազարդեալ 'ի շողինս հրալուսա-
 ճաճանչադեղնութեան . կնդրուկ երեւելի անուշահո-
 տութիւն . և զմուռս պիտանիս և խորհրդայեղց : Ասկի՛
 որպէս ինքնակալ և յաղթող թագաւորի . կնդրուկ՝
 որպէս նոյ երկնաւորի և մարդասէր բարեկամողի . իսկ
 զմուռ՝ որպէս ինքնայօժար վանս մեր մեռելոյ և յեր-
 կրի թաղելոյ , որ նշանակէ իսկ զմեր խաչելութիւն ,
 և յերկրաբերձ քաղաքականութեցս մեռանել , ըստ
 Պաւղոսի առաքելախօս վարդապետութեանն , թի՛
 « Սպանէք զանդամս ձեր զերկրաւորս » . և եթի՛
 « Սեռարուք դուք , և կեանքն ձեր ծածկեալ են
 ընդ Վսիւ յաճ » :

Վանզի յարեւելից ուղևորեալ մոգուցն աստղա-
 նշան ուղևորութիւն , որ զմիւսանգամ յանկարծահաս
 փայլակնացայտ յարեւելից զփառապարգև գալուստն
 Վրիստոսի նշանակէ , որ հատուցանէ սիրողաց իւ-
 րոց պարգևս բարեաց : Այլ դարձեալ որպէս ծնաւ 'ի
 Բեթղէէմ յառաջին գալստեանն , և արար խաղա-
 ղութի 'ի մէջ երկրի ըստ Գաւթայ , սոյնօրինակ և
 յերկրորդ վայրս եկեսցէ ըստ զգաստ ըստ տեսական
 վարուց , և հայրենական փառօք և իշխանութեամբ
 դատէ զտիեզերս ամենայն : Գարձեալ հրեշտակական
 աւետարանութիւն և գովասանութիւն համաձայնակից
 գողով իմ , հետեւիմ յաւետախաղաց հրճուասիրու-
 թիւն և 'ի նոյն յորդորումն հոմանմանեալ յարա-

ձիգն վերագունիցն հանձարեղացն արտասանութիւն
ներբողածանութն հանդիսիւք : Այսն զի այսօր ա-
ւարտագործեալ կատարաշինեցաւ լրումն եկեղեցոյ՝
բազմայեղանակ նախագուշակ մարգարեիցն քարո-
զութեամբ :

Այսօր ցնծան բերկրական կցրդիւք, և գեղազա-
նակ պարախնդութիւն երկնայինք և երկրայինք, այս
ինքն դասք հրեշտակաց և կաճառք մարդկան, և առ
միմեանս արտաբերելով զալստեամբ որդւոյն աստու-
ծոյ : Այսօր եհաս մեզ ժամանակ ուրախութեան, և
խումբք սրբոցն անաղօտ ջահագործութիւք գունակս
գունակս պայծառացուցանեն զպատիւ մեծի աւուրս
վայելունք զալստեամբ որդւոյն այ : Այսօր վերահայ-
եաց տեսակ զուարթածաղիկ երինազանագեղ գա-
րունն սաղարթաձեմափթիթ բուսով վայելչացեալք՝
զալստեամբ որդւոյն այ : Այսօր ընկալաք զցօղ ան-
գիտունք յանկիւնս շտեմարանաց սրտից, զի քաղցրու-
թիւն տատրակաց ձայնի լսելի եղև յերկրի մերում
զալստեամբ որդւոյն այ : Այսօր ամպք անայինք և
ցօղք հոգեզուարձք վերաբերեալ բուսուլք՝ ստորա-
ցօղեն ՚ի մարդիկ զալստեամբ որդւոյն այ :

Այսօր հոսանք հոգեխաղացք և վտակք առատա-
բուղիք միշտխոզմեան տրամոռոգանեն զբուրաս-
տանեալ աւետարանատունի մանկունս եկեղեցոյ
զալստեամբ որդւոյն այ : Այսօր արարածք ամենայն
լուսով փայլագունեալք ճառագայթանան գալու-
տեամբ որդւոյն : Այսօր երկիրս երկինք եղև, վասն
զի տեսանի անձ եկեալ յաշխարհ : Այսօր հողա-
ստեղծեալ զարմ աղամածնունք՝ երկնաքաղաքացի
անուանակոչութեամբ գրեցան ՚ի դպրութի կենաց
զալստեամբ որդւոյն այ : Այսօր նորափետուր հրա-
շիւք գեղեցկազարդեալք ՚ի հնարագործութենէն
զալստեամբ որդւոյն այ : Այսօր դառնացեալ աղ-
բերք և լիճք ջրակուտից ՚ի քաղցրութեան ճաշակս
տրամադրին զալստեամբ որդւոյն այ : Այսօր վտակք
յաղբերաց առատաբերին ՚ի խաղս և ՚ի մարգարե-
տինս ծաղկոցաց զալստեամբ որդւոյն աստուծոյ :

Այսօր ծով համատարած տարաբերութեան նուա-
գարանօք, սահմանագոչ վերաձայթեցին խաղաղա-

շարժ գեղաճեմեալ գալստեամբ որդւոյն աստուծոյ :
 Այսօր բազմահոլով գետոց յորձանասոյզ պտոյտք
 անարգել գանգրիւք գեղաճփեալք գալստեամբ որ-
 դւոյն ւնյ : Այսօր և ջրակոյտ առլուղակաց ջրկայ դա-
 սակարգուի եռաբերկրեցին վերածնութի՞ գալըս-
 տեամբ որդւոյն ւնյ : Այսօր և վերին օդք շահեկանա-
 բար սիւռեալք տարածին 'ի պէտս մարդկան գալըս-
 տեամբ որդւոյն ւնյ : Այսօր և վերագագաթնակա-
 տարահերձ կոհակ լերանց վարսագեղեալ պճնազար-
 դեցին գալստեամբ որդւոյն ւնյ : Այսօր երկնահոլու-
 վակառու տարերք երկուց լուսաւորաց ջահ՛ պայ-
 ծառ ղամբարօք փայլածին գալստեամբ որդւոյն ւնյ :
 Այսօր ստորափայլեաց արեգակն արդարութեան ,
 որոյ բժշկութի՛ իւր 'ի թևս է : Այսօր փարատեցաւ
 խաւար սատանայական առագաստին , և վերայայտ-
 նեալ տեսաք զլոյսն ճշմարտութե՛ , վասն զի Վ՛ն եկն
 յաշխարհս :

Այսօր անեղն եղանի և անտեսն տեսանի իւրով
 մարդեղութիւն : Այսօր անվայրափակն և անբովան
 դակն բովանդակի , և անժամանակն սկզբնաւորի իւ-
 րով մարդասիրութիւն : Այսօր դայ կամաւորուք յաշ-
 խարհ , որ յաշխարհի է՛ և 'ի սմանէ ոչ երբէք մեկ-
 նեցաւ : Այսօր խոնարհեցուցանէ զլերինս 'ի ծառայ-
 ութիւն , և հնազանդեալ հային հրամանաց նորա :
 Այսօր սնոտի արձանապաշտութիւնն ունայնանայր
 և 'ի բաց բառեիւր , և անպաշտութի՛ արգահատեալ
 յաշխարհ ծագեաց գալստեամբ որդւոյն աստուծոյ :
 Այսօր 'ի հին տրտմական տխրութեցն զերծեալք ,
 և որպէս նոր Խորայէլ եղաք՝ ապրեալք գալստեամբ
 որդւոյն ւնյ : Այսօր յղփացեալ շտեմարանք Հրէիցն
 անձգիտուէ սպառեցան , և կարօտացեալ շտեմարանք
 հեթանոսաց առաւել զեղմամբ առլցան շնորհատուր
 պարգևօք հոգւոյն սրբոյ : Այսօր վերաբունեալ ամ
 բարտաւանք յերկիր ստորանկեալ կործանեցան , և
 աղքատացեալ տնանկք օրհնաբանութի՛ մինչև յեր-
 կինս բարձրացան : Այսօր զերծաք 'ի դառնապար-
 հակ աղիւսագործութիւն Փարաւոֆի , և ընկալաք
 զգիր նամակի ազատութե՛ գալստեամբն Վ՛նի յաշ-
 խարհս : Այսօր բացաջնջեցաւ ձեռագիր հակառա-

կամարտին գալստեամբն Վճի յաշխարհս : Լսօր ծովաքատակ մեղք աշխարհի արտասահմանահալած փախչի, և Յորդանան ընդ կրունկն դառնայ, և ուզիք մարդկան լուսաւորին և Յս մկրտին, զի անծ տեսանի եկեալ յաշխարհս :

Լսօր Յովհաննէս որդի պառաւ մօրն զքարեան զարմ, դստերն Եղիսաբեթի, մեծ քահանայական շառաւիղ մակաբայեցուցն զեղմամբ, երկրորդ տոհմ զԼեւան՝ գոլով ՚ի հոսանապտոյտ պարագայ ջուրն Յորդանանու և մկրտե զՎճ, լինի վկայ համապատիւ սուրբ Երրորդութեանն, տեսանելով զեջնն աղանակերպ սուրբ հոգւոյն ՚ի վերայ գլխոյն Վճի, և զհայրական զձայնն, թէ «Ղա է որդի իմ սիրելի, դմա լուարուք» : Լսօր անխոնարհն ըզգլուխն իւրում ծառային խոնարհեցուցանէ, զի զմեզ բարձրացուցէ իւրով գալստեամբն : Լսօր անպարաւ գրեւին ձեռնադրի յիւրում մարդեղութեն, զի զմեզ տեսողս արասցէ իւրոյ անծութեն : Լսօր յայտնի աշխարհի, և ամենեքին լուսով ճառագայթատեսին : Լսօր անծաշունչ քնարն Յովհաննէս ՚ի գլուխ ահաւոր և հրակեզ մերձենայր, լուանալով մաքրին ջուրքն Յորդանանու յապականութէ եռացմանցն : Լսօր ջուրք ՚ի սրբութի աշխարհի վերաբերին, և մաքրագտեալ սրբին ամենայն բնուիք ջուրց յերևելայ մերոյ :

Լսօր ժառանգեցաք զարքայութիւն երկնից, զի արքայութե նորա վախճան ոչ գոյ : Լսօր բղխեցին լերինք զքաղցրութի, և բլրուք զկաթն ՚ի դալարով : Ղարձեալ բանալով անդրէն զխանութս ալեաց, վերրստին զեղեցկացուցուք զբանայեղց նուագարանաց գովասանութես մերոյ, և ՚ի նոյն յաղբերէ հոգեւոր հանձարոյ ընթացուք ճաշակել զվտակս հոգեւորս, և նովաւ աճեցուցանել զտունկս ներբողենիս առ տբ և անծաճին կոյսն Սարիամ, և շահատակարար ծաղկեցուցանել զբանիջոյց կորովուես մերոյ արգասեաց, ձայնակից լինելով հրեշտակին ահաւոր առասանութեանց :

Ուրխացիւր ինդամտաբար սրտիւ, Տիրուհի կոյս և անծաճին Սարիամ, դուստր մարգարէուէ շնորհի

և մայր ձն, որ անձ վայելչութեան ծնար զարեգակն արդարութե, և քե տեսաք և ծանեաք զճշմարտահոս լոյսն Վ՛ր՞, որ լուսաւորէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ: Ուրախացիր բերկրական սրտիւ, օրհնեալք ՚ի կանայս, պայծառազարդ արևելք, որ ՚ի քէն փայլածադեաց լուսաւորութի անձաշունչ երեսացն Վ՛ր՞ի, և մակազարթոյց զսիրտս մեր առ ՚ի քըն նել զխորս գիտութե ուղղափառ հաւատոյ: Ուրախացիր հրճուողալից սրտիւ, ամէնօրհնեալ ծնող և աղախին ձն, որ արժանաւորեցար գոլ ինքնատես և սպասաւոր Ռանին այ հօր:

Ուրախացիր բերկրական ձայնիւ, կոյս բարեպաշտ և անարատ ծնունդ նախաստեղծին, և ընդհանուր ստեղծողին ծնունդ, քանզի ՚ի քեզ հաճեցաւ բնակիլ անպարիմանալին անձ: Ուրախացիր մեծ խնդութե, Մարիամ սրբուհի, օրհնեալք ՚ի կանայս. բարձրա տեսակ և պայծառ երկին, աթոռ փառաց բարձրելոյ ճշմարտին այ: Ուրախացիր խնդամտաբար սրտիւ, մայր լուսոյ և բերկրանաց. անդաստան ծաղկաց, ցցունազարդ գեղգեղեալ բազմազունակ երանգաք և յարազուարճ առատացողովք, հովիտ շուշանաբեր, և մանուշակ անուշահոտ յաւէտ սրբամեալ վարուք, որ մեզ հրաշագործեցեր զանուշահոտութե գեղեցկազան Ռանին այ զտնտեսութի:

Ուրախացիր վայելչափառ սրտիւ, անհարմարացեալ Տիրուհի կոյս և անձաճին, դրախտ փափկանոյց զանազանափթիթ բողբոջիւք, զանազան գեղաւորութե, առաքելովք և մարգարէիւք և վարդապետօք, և ամենայազթ մարտիրոսօք և ամենայն սրբովք: Ուրախացիր և բերկրասիրեա՛, Մայր լուսոյ և բերկրանաց, այգի տաշտաւոր և ողկուղաբեր, գինեբուղի և սաղարթաճեմ շարունակեալ, որ ՚ի քէն մակաշառաւեղեաց ընձիւղեալ հայրատունի որթն ճշմարիտ Վ՛ր՞, և ներբաժանեալ երկուս մանունս գնդակաց հրէակաճառ ատենին շարանգան, և մտուր սարապետացն յաւարումն բաժանման շարադասեցաւ: Իսկ մեզ դաւանողացս զքեզ, ամենասուրբ անձաճին կոյս անարատուհի և արդարակորով, երկրպագողացս որդւոյ քո և այ մերոյ չորեքտաւեան առատաբուղի

վարդապետութե՛ք ճաշակ նուագաւորեալ պաշտեն մինչև 'ի ժամանակս յաւիտեանս :

Դարձեալ ուրախացիր արժանապատիւ սիրով, Սարիամ կոյս, ծնող և ազախին բոլորեցունց փրկէ չին և այ, հնծան անծահրաշ և հոգէնկար, որ յարաբղխեցեր զհոսանս վտակաց անուշահամն և առատաբուղիս հոգէծաւալ գինւոյն Վ՛տի 'ի մէջ հնծանաշէն եկեղեցւոյ . և մատուակեալ 'ի վեցեակ դար եղափոխութեանս մինչև յապառնիս եւթնեկի աւուր մտին, հոգէպարար զմայլեցուցանէն զմանկունս առագաստի փեսայացեալ Ռանին այլ և 'ի հանդերձեալսն վերաթուեալ շտեմարանելով զբարեացն պարգևաբաշխութե՛ք ձիրս : Աւրախ լեր Սարիամ չնորհազարդեալ տաճար, հարսն երկնային և լուսաւոր առագաստ արքունական, գործարան միաւորութե՛ք Ռանին բնութե՛ք : Աւրախացիր, անհարսնացեալ Սարիամ, մայր տն, բաժակ հոգևոր և աւտուածային չնորհացն տուող 'ի ձեռն աւետարանագիր արանցն Վ՛տի, որ արբուցին զտիեզերս :

Դարձեալ բազմերանաւէտ բարբառով ուրախացիր, Սարիամ սրբուհի, օրհնեալդ 'ի կանայս, ուրկան հոգևոր և հոգիանիւթ գործի լայնասփիւռ առաքելադուսդ ձկնորսացն, որք զանազանահաւաք զարմիք որսացին զբոլորահովիտ տիեզերս 'ի կեանսն յաւիտենից, և յանծերանալի համաբնակութիսն : Աւրախացիր բարբաստուք, անհարսնացեալ Սարիամ, անարատ մաքուր ազանի Վ՛տի, չնորհատուհոգւոյն ընդունարան, որ միշտ բարեձևազարդեալ ուղղապետին եկեղեցիք հեթանոսաց :

Դարձեալ խնդակից ուրախացիր, Սարիամ, պըտուղ արքայութենն երկնից . յաշագս որոյ 'ի քո պատուական մայրուէդ, եկեղեցիք նորափետուր զարդարեալ հրաշիւք, ծայրարձակ ոտիւք առաքինութե՛ք պայծառաբերին պողով հաւատովք յընծայումն որդւոյ քո այ մերոյ : Աւրախացիր, անծածին Սարիամ, պարկէշտասէր և սրբասէր վարուք, ոչ եթէ մերօրէն ինչ, այլ անձառաբար յղացար և ծնարզ] Վմանուէլն, ըստ Եսայեայ տեսողութեանն . վասն զի ճշմարտապէս մանուկ ծնաւ մեզ ըստ հոգւոյն նկա

րակերպութեն , և Որդի բարձրելոյն ըստ հրեշտակապետին աւետեացն : Օ ի նախ քան զանուանակուչութի հօր և մօր , առցէ զգօրութի Ղամասկոսի և զաւար Ղամարեայ . և ոչ ևս երկիցուք ՚ի ծխալից երկուց թագաւորաց խանձողաց ՚ի մեզ տիրելոյ . այս ինքն մահու և դժոխոց . վասն զի « Թագաւոր մեծ ՚ի վերայ ամենեցուն անծ է »

Ղարձեալ ուրախացիր , անփորձ ՚ի մերօրէն հարսանեաց , հարմն երկնային և անհարմնացեալ Սարիամ . որ հրաշագանապէս անծ վայելչութեան ծնար զՂամասկուէն , զգեղեղեշարմասն ¹ պտղաբերեցեր որպէս ՚ի ծարաւուտ երկրի , և անկէզ պահեցար շնորհօք սուրբ Հոգւոյն ՚ի մեւքակերպ սաղմնանկար ՚ի զուգամասնութէ . այլ և ՚ի հեթանոս շառաւեղաւործեաց . համաբոլոր տարածասփիւռ ներծաւալեցաւ ուղեշարձակ քաղցրաբեղուն արմատոյն այնորիկ , որ ՚ի քէն յայտնեցաւ աշխարհի , որք պասքածարաւիք էին յամենայն սրտէ անգիտութեն :

Ուրախացիր լուսայեղց դիմակաւ բերկրեալ և զուարթալից սրտիւ , օրհնեալք ՚ի կանայս , մայր կենաց և փրկուէ ազգի մարդկան . գեղմն լուսակիզն և անթանալի , մարգարէափորձ պիտաուութք բացաւ յայտեալ , որ զանարանց հարսին ունիս զձե անախտ և անամբօխ և պարկեշտասէր . վասն որոյ Ղաւիթ ՚ի մարգարէս ՚ի նոյն տիպս կուսածին հարսնութեդ՝ յորդորահնար քնար նուագարման և համակիզէջն Հոգւոյն ՚ի քեզ տպաւորեալ , ասէր « Իջէ որպէս զանձրև ՚ի վերայ գեղման , և որպէս զցօղ զի ցօղէ յերկիր : Թագեացի յաւուրս մարմնաւորութե նորա արդարութի , և բազում խաղաղութի մինչև ցկատարեալ մաշումն լուսնին » . այս ինքն նուազումն հեթանոսաց . զի « Որ հնանայն և ծերանայն՝ մերձ է յապականութի » , ըստ Պօղոսի . վասն զի Վսիւ խափանելոց էր :

Ղարձեալ եռանդնասէր և յորդոր փութով և յորդորապահանջ հարկապահանջութես ըստ բազմայեղանակաբուն շառաւիղն գովասանութք Հո-

¹ Յօրինակին պեղեղեշարմասն :

զւոյն սրբոյ վարսագեղուէնց խոյրապսակազարդ փաղ-
փեւք ընծայաբերեմք քեզ՝ի մերմէ նուաստաջան ա-
րուեստից, ով Տերուհի, սրբասնեալ վերահռչակեալ
քոյր մեր, դուստր մարգարէութեց, ահն սուտակ և
դահանակ լուսաջահայեղց, ընտրաբանեալ ՚ի մէջ
դատերաց Սիոնի: Այսն զի ՚ի բազմաց անհաւա-
նութի, քեզ հաճեցաւ հայրն բոլորից՝ և առաքեաց
զիւր սիրելի միածինն ՚ի ծառայական մարմինն տա-
ղաւարիլ, հոգւոյն սրբոյ ՚ի քեզ ներգործեալ:

Աւրախացի, պարկեշտուհի Սարիամ, դուստր
աբրահամեան աւետեացն, բողբոջ Խահակայ. որ
անապական ծնար և սքանչելապէս գնց զգօրութիւն և
զիմաստութիւն և զանդրանիկն արարածոց և զարա-
րիչն համաբոլոր բնութեանս, որ այժմ դարձաւ ՚ի
տղայութի արքայն հրեշտակաց, և դարձոյց զտիւ-
զերս ՚ի մանկութի կենաց:

Դարձեալ անձաւայելաբար սրտիւ և բարեզուարճ
ուրախութիւն ուրախացի, Սարիամ անհարմնացեալ,
և անզբաղասէր կոյս, և սիրագործ երանաւէտ հարսն
ծննդեամբ. զեղեմական գետոյն վտակս առատագոյն
բերես ՚ի քեզ, որ խոխովեալ արբուցանես գլորչնազա-
նագունակ տունկս դրախտին փափկութե, որ այժմ
իմանալի է մեր դիտաւորութես՝ զեկեղեցւոյ բու-
րաստանեալ մանկունս՝ վերաստեղնեալ հաւատով,
մեալք անարգելս առ հոսանահոլովաշարժ վար-
դապետութիւն աւետարանին Վսի:

Աւրախացի բոլորամիտ սրտիւ, Սայր լուսոյ, առ
տուածածին Սարիամ, սեղան անձախառն. զոր օրի-
նակ հրամայեցաւ Սովսեսի անտաշագործ մարդ-
կային հնարաւորութեց վիմակառոյց արձան ուղ-
ղեալ՝ ընդունակ ընծայեալ նց. այսպէս և պարկեշ-
տասէր անձնքո անկաւ և անփորձ պահեցաւ ՚ի մեր
օրէն հարսանեաց. վասն զի շնորհօք հոգւոյն սրբոյ
պարսպեալ՝ եղեր ընդունող սեղան երկնային հացին
իջլոյն յերկնից, որ կեանս տայ ամենայն աշխարհի:

Աւրախացի, Սարիամ, խնդամտաբար սրտիւ հլու
և միամիտ աղանի օրհնեալք ՚ի կանայս, եզամիտ
Վրիստոսի, որ և հրամայեցաւ ըստ Սզեկիկիւն-
վասն զի դու ես գուռն փակեալ արևելածագ ելից

և մտից տեսան Մատուծոյ Իսրայելի . զի անհասական և անձառ խորհուրդք բերիւր երկնապարծամենասուրբ կուսութեանդ քո դուռն : Իարձեալ ուրախացիր վերստին երկնաբեր աւետօք , բերկրեալդ վայելուչ սրտիւ , մայր Վրիստոսի Մատուծոյ մերոյ , որ անփական և անբովանդակն երկնի և երկրի մեծագործութի՛ն ինքնակամ յօժարութի՛ք սրտիւ բարեհաճեցաւ իննամետայ ժամանակաւ գեղազարդեալ ՚ի քում հոգեկնար արգանդիդ , մինչև ծնար զանդրանիկն արարածոց և զարարիչն , որոյ կոչեցաւ անուն Յո՛, ըստ հրեշտակին առասանութե :

Աւրախացիր , Մարիամ օրհնեալդ ՚ի կանայս , երանելի տեսողաց , և տարփելի անտեսից . ջրհոր հոգեւորաբուղն , որ լի գոս անձահար իմաստաբեր անձկութի՛ք , կենդանի անծարաւ ջրոյն , որ սամարուհւոյն տենչասիրեալ սակս նեղավտակ պաքածարաւ երթևեկութեն . որով և մեծ մարգարէն Գաւիթթաբաւորն Իսրայելի , հոգւոյն եռանդամբ ցանկայր . « Ո՞ տայր ինձ ըմպել ՚ի ջրոյն Բէթղէէմի որ առ դրանն » : Եւ յիրաւի առ դրանն զիտաւորութի մարգարէին , քանզի մերձ առ դուրնն կայր փառապարգև գալուստն Վ՛ստի : Եւ երից զորավարացն կառամարտից վանեալ զգեդուր այլազգեացն , և բերեալ զժուրն ըղձալի առ արբայ , և ոչ կամեցաւ ըմպել . քանզի ոչ էր հասեալ ՚ի նորա ծերացեալ ժամանակն՝ ծնանել ՚ի քէն Վ՛ս . Թէպէտ և համազոյգ անձն և մարմին մարգարէին և հոգի ընդ անձատուր իմաստութեն և զիտութեն , և անցեալ ընդ երկրաբարձ ասպարէզս զիւագունդ փաղանգաց , որ և Թնամիս առնեն պատրանօք իւրեանց զմարդիկ Մատուծոյ :

Աւրախացիր , Մարիամ , տիեզերաբաղձ տուփ ոսկի , զարգարեալ անուշահոտ ինկովք , և տաշտ մաքրափայլ իւզեփեցական բուրմամբ . քանզի որպէս ՚ի գունազանազեղ վարդից և շուշանաց և հովտածիւծաղասաղարթ¹ ծիրանաթոր մանուշակացն , վարդազեղեալ ունիս հիւսակ , անհարմնացեալ Մարիամ ,

1 Յօրինակին կովածիւծանասաղարթ :

պարկեշտասէր վարուք առաքինական սրբութեամբք :
 Ս ան որոյ և առ 'ի մէջ ընկալցիս զբանիցս ընծայ-
 ունն, որ ոչ երբէք կարօտաբերիս նուաստութեանս
 մերոյ դրուատեաց . որոյ գովասանուէ չափ ոչ առ 'ի
 մարդկանէ, այլ առ 'ի յնչ ընծայի քեզ, ո՛վ սիրուհի
 կոյս և անձաճին Ս արիամ :

Արդ այսպիսի շահատակող և հոգևոր կուսական
 տօնախմբութես, ո՛վ սիրելիք, բազմայորդոր փու-
 թով հաւանեցարուք 'ի շնորհավաճառութիւն այսր
 աւուր, երիտասարդք և կուսանք, ծերք և տղայք,
 գեղեցկապէս փութով փոխեցէք զմարմնաւոր թրմբ
 կահարութիւն ընդ հոգևորսն . վասն զի այս իսկ է
 ժամանակ տուրեւառիկ, անարգել անխափան ուղևո-
 ըիլ յարքայունն երկնից 'ի Վ՛ս Յ՛ս 'ի նոր մեր, որում
 փառք յաւիտեանս յաւիտենից . ամէն :

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

PHYSICS DEPARTMENT

Ս Ը Ն Ը Կ Ը Յ

Հ Ա Յ Ո Ց

Կ Ը Թ Ո Գ Ի Կ Ո Ս Ի

Ա Ս Ա Ց Ե Ա Լ

Յ Ա Ր Մ Ա Ի Ե Ն Ե Ա Յ Ն Օ Ր

Ո Ր Է Ղ Ո Գ Ո Մ Ե Ա Ն

Լ Ի Ե Տ Ա Բ Ե Ր և տիեզերական տօն, և տէրու
 նեան տօնից գերափառագոյն. բերկրաբերձ
 և սոսկալի բոլոր բանակաց երկնաբերաց փառաբանու
 զաց պանծացուցանելի. յորում երկինք և երկիր և
 ծով բերկրեալ խնդան. քառահարկով տարերք զհնու
 թի յառաջին յեղանակելով լինելու թի: () Գ ք զբա
 րեխառնական և զպտղածնօղ բուրեցին շունչ: Աս
 տեղք մաքրափայլք և ականակիտք, նկարակերտելով
 զիւրաքանչիւրոց դիրս: Առսին կարակնաձև լրա
 ցեալ արեգակնապէս զբոլոր գիշերն ջահաւորէ. և ա
 րեգակն'ի հասարակահոլովն ժամանեալ ժամանակ,
 զմէջս երկնի և երկրի հոլաթևէ: Այով'ի բարձրա
 կոհակ վրդովմանց և յոլորտածաւալ շարժմանց
 լռեալ կայ: Արկիր զձմեռնային զսգաւորութիւն'ի
 գարնանային յեղանակեալ վերանորոգումն. և բու
 րաստանք'ի ստածօղ օդոց սաւառնազարդեալք, 'ի
 գագաթունս բերելով ծայրից զծաղկանց զանազա
 նուին տեսակաց հոտոց և համոց: Ալ զեռունք որջա
 ցեալք յերկրի, բունեալ'ի փապարս և 'ի ծերպս, զժա
 մանակիս զգալով զմեծափառուի, արտավերելեալ

հետևողութիւն յաւետածև իւրաքանչիւրովք ձայնիւք, երաժշտականեալ¹ փողէն զաւուրս վայելչութիւն: Այլ ծովածին կենասէրք երամակուզդի² լսելով երամակ պետիցն, ՚ի ձմեռնային և ՚ի միջնաշէնարհ³ կայարանացն երամախմբեալք՝ ՚ի մերոյին ժամանելով գետին, լըրացուցանեն զերկիր և զջուրս, և բազմանուագ ձայնիւք զզանազանութիւն երագածև տեսակաց, ՚ի տըււրնջեան և ՚ի գիշերի զերաժշտականացն վերաթմեան նուագ:

Այլ գազանացն և երէոցն քառահետև շարմունք, հոլեալք և երամացեալք՝ ՚ի շարից և յանտառաց նորածին ծաղկանց ճոխացուցանեն զորովայնս. զգոչումն և զգչումն արտաբերելով՝ զբանականաց հրաշացուցանեն զլսողութիւն: Այլ տնական կենդանիք արտաքոյ իւրաքանչիւրոց ելանեն յորջից. ոմանք զհողագործականն տաժանմունս ՚ի նուս բերելով, իսկ այլք հոլեալք լրացուցանեն զհովիտս և զկոհակս զանազան ծաղկանց՝ զմարմնոյ և զճարպոյ բերելով զառուելուի: Այլ նաւուղղակին գնաւ ծովուն ընծայեցուցանելով, ՚ի ձմեռնային լուեալ վըրդովմանց, աջողակ առագաստափար օդով սլացեալ ՚ի բաղձալին ժամանէ երկիր: Այլ երկրագործ ՚ի բնակաց, ըստ հոգենուագ երաժշտապետին՝ Վաւթայ, ելանէ ՚ի գործ իւր և ՚ի վաստակս ձեռաց իւրոց, զսերմանական և զտնկածօղ երկիր գործելով, զըշտեմարանացն ճոխացուցանելով զլիուի: Այլ բո վանդակ երկին և երկիր և ծով, և ամ կենդանաւ տեսակք զաւուրս մեծացուցանելով զփառաւորութիւն՝ բերկրին և ինդան, և մերոյ փառաբանութիւնս բարեբանակցութիւն⁴ համագոյսպէս. զոր բաւական համարելով, զաւուրս յառաջ ածցուք զսաղմունս:

Վ թագաւորաց մեծն, և օրինականին երաժշտականութեան առաջին Վաւիթ, գրաւորականին հաւատարիմ մարդարէ, և բարբարոսական ազգին տանջող. մշտայաղթ ՚ի պատերազմունս, և հսկայիցն ծախող. նսեմացելոյն Վեչի ճրագ, և արարչական սրտի

1 Յօրին. երաժշտականեալ:

2 Յօրին. երանակուզդի:

3 Յօրին. միջնաշէն:

4 Յօրին. բարեբանակցութեան:

Հօր համակամ. նախահայր մարմնացելոյ Րանին, և անձամբնի կուսին ցեղապետ, և ըստ նահապետական տանցն նախահայր, և ՚ի քահանայական երգս պարագլուխ և անձամբնող, սերովելիցն բարեբանակից զսերկեան նախադռնելով մարգարէական հոգւովն ըզմեծափառուն փողեաց մեզ բան, զիննսնէրորդ զվեցերորդ սաղմոսն՝ ասելով, «Վերինք ցնծասցեն առաջի տն զի գայ»: Վման և ճշմարիտ է բանս. զի յա մենայնում պետք և առաջինք զաւետաբեր խնդան լուր. ՚ի զօրու զօրավարք. ՚ի հօտի հօտապետք. ՚ի նաւի նաւապետք: Վստայ և արարին զհողեղինի առնլով զբնուլիս, բարձրացեալ կոհակք և բլուրք հոգեղինք՝ զհողեղինին գոլ ազգակցուին խնդասցեն. և վերագոյն քան զվեցերեակ աւուրցն փառաբանուին բերկրեսցին. յաղագս իւրաքանչիւրոցն ունելով հողեղինօք ընդ հողեղինին հարագատուի մարդկան և լերանց:

Րայց ըստ նշանակի նմանեցուցանէ զվերինս մաքուր մարգարէական անձանց, որպէս հողանիւթեայ մարմնովք տաճարացան սրբոյ հոգւոյն, և շնորհաբարձ բախտին վերամբարձան քան զմարդկային բնութիւնս, և հոգւոյն սրբոյ սրակնութեամբ զբազմաժամանակեայ և զհանդերձեալ դիտաւորեցին խորհուրդ. և գրաւորական թողլով յիշատակ զսարսափելի աւուրս մեծվայելութի: Օր յաղագս սերկեան խոստովանեցին աւուրս շնորհաւետեալ հոգիք նոցա, և անձային բարձրացեալ ճոխութիւն, յիշատակելով զնոցա երգ ընդ մեզ ցնծալով զՈրդւոյն մեծափառ եկաւորուին. որում և մեծն առաքելոցն Պաւղոս յիւր յառաքելական մատենին, առ եփեսացի տումարին գրելով, «() օրհնեալ է Րատուած՝ և հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ օրհնեաց զմեզ անձ հոգեւոր օրհնութիւն յերկնաւորս ՚ի Քրիստոս», հրամայէ զմեծ գունդն բարեբանութեամբ զմարմնացելոյ Րանին օրհնել զհայր ոչ ըստ գրաւորականին և հնացելոյ օրինին, որ ընդ անիծիւք էր փակեալ, և անախառն դատողութիւնք յանցաւորացն հրամայէր տանջմունս գնացից՝ և տանջանաց զանազանեցելոց, վերոյ ընդ վերաց, և անդամս ընդ անդամոց կրճատել. և զանազան սատակմունք, քարկոծ.

մունք , սրամահուծիւնք և հրկիզուծիք : Այլ Որդւոյ զմեր կերպարանեալ զբնուծին , և բնուծիք քաւարան գոլով բնուծին , 'ի տանջանաց զբնուծին ազատելով , և միով մահուամբ զանազան մահուց կրնքեաց գիր . և յաջորդեաց շնորհ գրոյն՝ Հոգի . և եղև ինքն Րանն ամ յամենայնում : Ինդ հողեղէնան հողեղէն . օրինին ճոխացուցանող . գրոյն լուծիչ . ոգւոյն քննող . պատկեր աներևելի Հօրն , և ամ մարդկան զօրուի և իմաստուի . հասարակաց արարիչ . փակելոյ դրախտին բացող . ճանապարհ 'ի վեր ելից առ Հայր . դուռն երկրորդ՝ յերկրորդ երկինս մտողաց : Երկին ամ , յաղագս արարչուծին . երկրի թագաւոր , յաղագս մարմնաւորուծին . մարդկան սիրելի , յաղագս փրկագործուեն . հրեշտակաց նախապատմելի , յաղագս ամուսն . և հասարակաց համախընդուծիք լծորդելով առաքելական գրոց 'ի տիեզերատօնակ աւուրս համաշխարհական խմբեալ բարեբաւնումն , զբոլորից Հօր՝ և զմիածին Որդւոյն մարդասիրուծին փողեալ գոչեսցուք ամբաբանաբար :

Երանելին մեծն յաւետարանաց Ատթէոս , երկուց հոգևորաց հանդիպեալ շնորհաց , զառաքելականն ունելով աթու , և արտաբերական աստուածորդւոյն ճառեցելոյ աստուածաբանող , յիւրում հրաշապատում տառն աւետարանեալ զսերկեան աւուրս եկաւորուծեան խորհուրդ՝ ճառեալ ասէ . « Իբրև մօտ եղէն յԵրուսաղէմ , և եկին 'ի Րեթփա գէ մերձ 'ի լեառն ձիթեանաց , յայնժամ : Յարձակէ երկուս յաշակերտացն և ասէ ցնոսա . Երթայք 'ի գեղդ որ առաջի ձեր կայ . և իբրև մտանիցէք , գրտանիցէք էշ կապեալ և յաւանակ ընդ նմին , լուծէք և ածէք ինձ . և եթէ որ ասիցէ ինչ ձեզ . ասասջիք եթէ ան իւրում պիտոյ է . և վաղվաղակի առաքեաց ցնոսա » : Ինդ աւետարանչիս ճառեցելոյ զամբահրաշ սբանչելագործուիս Որդւոյ՝ որպէս հոգեխառն շարագրեալ տառիւք պատմէ բան : Ի Վալիլէէ հետևանալ Որդւոյ , և զախտացելոյն մերձ զամբեղէնն ընդձեռեալ բուժական դեղ հոգւոյ և մարմնոյ , որոյ աղագաւ և զհաւատարիմ բարեկամին տեսանէ զախտանալն ըստ մարմնոյ 'ի հրէաստանի և 'ի Րե-

Թանիա, և զանբուժականն մարմնեղէն ախտին 'ի մարդկեղէն զեղարանացն, և զանչնչանալն և զննջելոյն յաջորդեալ տեղի, և զառաքումն լծորդածին կանանցն, զի նախ քան զվաղձանեւն ժամանեսցէ անձային չնորհօքն, և բուժումն անբժշկական ախտին ընդձեռեսցէ: Այլ նախ քան զժամանեւն տն և աշակերտացն 'ի Րեթանիա՝ անչնչանայր Վազարոս, և զգերեզմանականացն ըմբոշննելով կերպ, փոխեալ լինէր 'ի կենդանութենէն. զոր եկեալ տրն գտանէր վախճանեալ չորեքօրեայ, և զապականեալ մարմնն, սոսկալի ձայնիւ տիրաբար հրամայեալ՝ արտաքս 'ի գերեզմանէն հետեանալ, և յերիզապնդէ Թողացուցանել կապարանէ. և 'ի Րեթանիա յընթրեւն իւրում, մի 'ի բազմականացն էր Վազարոս:

Այսօրիկ հրաշագործութիւնք յերիկեանն յանկեաց՝ առուրն. իսկ 'ի սերկեանս առեալ զբազմունի աշակերտացն, և յառաջելով 'ի Րեթանիայ 'ի ձիթաստանեաց լեառնն, հանդիպի 'ի Րեթփագէ. յոր առաքէ երկուս յաշակերտացն, և հրամայէ ածել զէչն և զլաւանակն ընդ նմին. և փութով առաքէ, զի նախ քան զմտանեւն Արուսաղէմ, նստցի 'ի վերայ նոցա: Բայց քն աստի տեսուէ մտանեւն Արուսաղէմ, և եկաւորեւն 'ի Րեթփագէ և 'ի լեառն ձիթեանեաց, իմանալի է զմերձակայ չարչարանաց անձորդւոյն, և մահուամբ 'ի մահուանէ զմարդկային ազատել զբննուրն. և Արուսաղէմ իմանալ զբոլոր տիեզերաց՝ 'ի ձեռն առաքելական քարոզուէն, և աւազանին վերաճնուէ: Իսկ Րեթփագէ Թարգմանի տուն ծնօտի. որ նշանակէ զանմաքուր կենդանոյն ծնօտ, որով վարսաւորն Սամիսոն զանթւիատիցն բիւրուց վանեալ մեռուցանէր. ընդ որում և վարսաւորն Յոսորդի և Բան Տօր նստելով 'ի վերայ նորին կենդանոյ, նշանակէ զանձացելոյ հակառակամարտին ճուլութիւն 'ի տիեզերապետութենէ լուծանել ընդ ստիւք մեռուցէ: Իսկ ձիթաստանեաց լեառնն նախ գուշակէ զտիեզերաց լուսաւորեւն՝ կամաւորաբար եկաւորեւն 'ի չարչարանս: Այլ երկուս առաքեալս

1 Յօրինակին յանկեանց:

յաշակերտացն , զտիեզերաց նմանաբերէ զկոչումն , երկու հոգեխառն կոչմամբ՝ գրաւորական և հոգեւորական . և վաղվաղակի առաքելն զերկաքանչիւրոցն անվրէպ ժամանակս նշանակէ զմարդարէականն և զաւետարանականն :

Ի այց այս ամ լեալ ոչ վայրապար . այլ զի լցի բան մարդարէականին , խոստովանութիւն Օ աքաբեայ, որ ասէ . « Ի սացէք դստեր Սիոնի . ահա թագաւոր քո գայ քեզ հեզ և հեծեալ յէշ և յաւանակի իշոյ » : Համագոյ օրինին հոգեկիրքս զհանդերձեալ անծորդւոյն զքանչեւագործութիւս նախաճառեալ անձաբանեցին : Մեծն ՚ի նահապետաց Յակոբ՝ մարդարէական ճառեալ ձայնիւ , ասէ զՅուդայէ , յորմէ հանդերձեալ էր զառ ՚ի կուսէն մարմնանալն կատարել , որ է նախահայր սբայ կուսին . « Ի նպակաս լիցի իշխանութիւն և պետութիւն ՚ի յուդայեան տոհմէն , մինչև հասցէ ժամանակ որոյ իւրն է իշխանուի : Ապետեցէ զգրաստ իւր ընդ որթոյ , և զյաւանակ իւր զգնդակէ որթոյ » :

Ի մանալէ որթ զանծորդւոյն մարմնաւորութիւնն յաղագս խոստովանելոյ զիւր զարարչական մարմինն որթ , և զերանելի առաքելալսն ուռ : Ապետեցէ ընդ որթոյ զգրաստ իւր , զմարմնանալն և զհամատնօրի նեւն ընդ հողեղէն բնուիք , և կապել անգրաւ և անլուծանելի սիրով ընդ մերունակ բնուես : Եւ ընդ գնդակէ որթոյ զյաւանակ իւր , զնորածնելոցն յաւազանէ որդէգրաբար ընդ սբայ Երրորդուէն կապեալ սիրով , անխոյզ և անլուծանելի կապանօք միաւորեաց : Իսկ մեծն մարդարէից Օ աքաբեայս բացափայլ և անառաքաստ զտերկեան արարչաբար հրաշագործուի փողեալ ճառեաց բան « Ի նդա , ասելով , դուստր Սիոնի , զի թագաւոր գայ քեզ՝ նստեալ ՚ի վերայ անմաքուր կենդանեաց նորոց » : Թագաւոր և փրկիչ , հեզ և խոնարհ խոստովանի զծոցածին Բանն Հօր . որ ընդ արարչական անուանն ՚ի ձեռն մարդկօրէն անօրէնութեն , և ճշմարտապէս առնելով մարմին , և խոստովանելով թագաւոր՝ անձ երկնի և երկրի : Իսկ յանմաքուր կենդանիսն նստելով , զերկուս նշանակելով ժողովարանս՝ Հրէից և հեթանոսաց . և անմաքուր

յաղաքս այսորիկ, զի զուգահաւասարք երկաքան չիւրոցն 'ի բազմամծուին կործանեալ: Ա՛յ որոյ առնու զընութի հողեղէն, 'ի ձեռն որոյ սիրով առաւելագունիւ կապեալ ընդ չորէից և հեթանոսաց ժողովարան, արժանաւորեցուցանէ զնոսա որդէգրութե հաւասարակից չօրն և իւր ժառանգութե՝ աւազանին վերածնութի, զոր տաճարացուցեալ ինքեան՝ նստի և հանգչի 'ի սբ յեկեղեցւոջ, որ զանազանէ երկնային չօրն՝ քահանայս և մարգարէս, ուստերս և դստերս:

Իսկ դուստր Սիոնի՝ իմանալի է զսբ եկեղեցի. վասն զի երանելի առաքեալքն զնորա արքայութեն խորհուրդ 'ի Սիոն յաստուածորդւոյն ընկալան. անդ և զսուրբ չորդւոյն իշխանութին առին 'ի ձեռն անձային բերանոյ փշմանն. անդուստ և զհիմնարկութի սբ եկեղեցւոյ երանելի առաքեալքն սկզբնաւորեցին. անդուստ և լեզուօքն՝ զանազանեցելովք՝ ի քարոզութին կոչեցան, և զանձորդւոյն զյարութին 'ի նմա ծանեան: Յաղաքս այսր անի հրամայէ ուրախս նալ դստեր Սիոնի՝ որ է սբ եկեղեցի:

“Ղնացին աշակերտքն և արարին որպէս հրամայեաց նոցա Յս. ածին զէշն և զյաւանակն, և արկին 'ի վերայ նոցա ձործս, և նստաւ 'ի վերայ նոցա”: Այք մեզ երկու աշակերտքն թուին գնացեալ: Օ երկուս առաքելական տեսակացն ասել. զեթանասուն և զերկուցն՝ զոր նախ քան զանձեղէն զյարութին իւր առաքեաց. և զերկոտասանսն՝ զկնի յարութեն փչելով 'ի նոսա չորդի սբ, և ասելով. “Ղնացէք աշակերտեցէք զամ հեթանոսս”: Իսկ ածել զկենդանիսն և զյաւանակ նորունի՝ զնորահաւատիցն, որ 'ի չորէից և 'ի հեթանոսաց ժողովրդէնէ ասէ, որք հաւանեալք նորա վարդապետութեանն՝ մարմին և անդամք սբ եկեղեցւոյ կոչեցան: Ալ արկանելն 'ի վերայ ձործս, ընձայեցուցանել զհողոյ և զմարմնոյ զմաքրութի, յորում նստէր և հանգչէր անձորդին:

“Ալ բազում ժողովուրդք տարածանէին զհան-

1 Յօրնակին ԳԼԵԿՈՒՄ:

դերձս իւրեանց 'ի ճանապարհին » : յողովուրդ բազում, զբազմութի մարդկանն ասէ, որք զմարմնական ախտից յանցաւորութիս խոստովանութե առաջի անձորդոյն՝ անծածկաբար տարածանելով . իսկ ճանապարհին հետեանալն Յօի 'ի հրէաստանի՝ և 'ի Պաղիւեա, և ախտացելոյն ըստ պատուիրանազանցութեան, ինքնին ժամանել բուժումն 'ի յանցմանն բժշկապետաբար : « Եւ այլք, ասէ, հատանէին ոստս 'ի ծառոց, և տարածանէին 'ի ճանապարհին » : Եւ այս ոչ վայրապար, այլ անձեղէն եկաւորութեան արժանաւոր դործակցութիւն . քանզի զտիեզերական հանդերձեալ էր կատարել զփրկուի, և զընդունայն հնազանդութիւն արարածոց փոխել յարարչական հնազանդութիւն . երկրի և ծովու՝ իւրաքանչիւրովք ճանաչել և մեծացուցանել զանձն իւրեանց . ընդ որս և ծառք 'ի նորածին ծննդոց՝ զսաղարթ և զծաղիկս դոյացուցչին իւրեանց ընդ ոտիւք ընծայեցուցանեն :

« Եւ ժողովուրդն որ առաջի և զկնի երթային՝ ազաղակէին և ասէին . () րհնութի որդոյ Պաւլի, օրհնեալ որ դասդ յանուն տն, օրհնութի 'ի բարձունս » : յողովուրդք առաջի և զկնի ասելով, իմանալի է զերկուս հոգեկիր պարս՝ մարդարէութի, քահանայութի . որ նախ քան զմարմնանալն խոստովանեցին զնորա գալուստն . իսկ զկնի ժողովուրդքն երանելի առաքեալքն, և սրբոյ եկեղեցւոյ բազմութիւնքն, որք զկնի նորա տնօրէնութեան որդի Պաւլի զնա խոստովանին . որ անբաժանաբար 'ի հայրենին մնաց ծոց, և բոլորովիմք գտաւ 'ի կուսական յորովայնէ ծնեալ մարդ կատարեալ առանց մեղաց : Օայսոսիկ միշտ խոստովանին երկուց ժողովարան, պարք առաքելականս սրբով եկեղեցւով :

« Եւ 'ի մտանէն նր, ասէ, յարուսաղէմ, դղրդեցաւ քաղաքն ան, և ասէն ո՞վ իցէ սա » : 'ի հասարակաց արարչին ծնելութե մաքրի և երուսաղէմանայ բոլոր տիեզերք . վասն զի զհամագոյ աշխարհի զմաքրութիւն ոգւոց մարմնանալն նշանակէր, և բազմաստուածութեանն անմաքրութիւնն 'ի տիեզերաց ոլորտեցուցանել : Եւ դղրդումն քաղաքայնոցն, զհակառակամարտին զօրութիւնն ասէ, որք փոր-

ձեալ՝ գտին զնա անձ ճշմարիտ . որում աղաղակելով
ասէին , « Ղախտեմք զքեզ սվէս , սքզ այ , մի նախքան
զժամանակն զմեզ դատեր » : Օ անձացեալ նոցա զօ-
րութիւն արտաքոյ ընկէց . և զիւր ճշմարիտ արարչա-
կան անունն հրամայեաց անձախոստ բարեբանել ճրչ
մարտափառութիւն :

« Եւ ժողովուրդքն ասէին , սա է մարգարէն Հն ,
որ ՚ի Եզգարեթէ գալիլիացոց » : Եւ ժողովուրդս՝ որ
պէս նախաձառեցաք իմանալի է զքե եկեղեցի , որք
միշտ խոստովանին զնորա անձութիւն , և զմարմնա-
նալն և զմնալն առ Հօր : Եւ մարգարէ յաղագս մար-
գարէաբար և անձապէս զհասնդերձեալն նախագու-
շակել . որպէս ՚ի Ղալիլէ շրջել , և ՚ի հրէաստանի
տեսանել զՂաղարոս մեռեալ , և նախ քան զգրաւո-
րական դպրուի , զօրինականացն դաստիարակէ զհրա-
հանգապետս : Իսկ նազօրեցի կոչի , մաքուր , որ է
հաւատարիմ և ճշմարիտ վկայ նորա մարմնաւորու-
թեն . « Ար ոչն արար մեզս և ոչ գտաւ նենգուի ՚ի
բերանն նորա » :

Եւ մեք որ այսպիսի տիեզերագուլ և բարեբանօղ
հանդիսացաք աւուրս , համախոհ լծորդութիւն ընդ
նոսա զանձեղէն մտիցն սպասաւորեսցուք գործակցա-
բար , ընդ տղայն բարեբանեսցուք , ընդ ծերնն հան-
դերձ ոստովք երկրպագեսցուք , ընդ աշակերտնն
խոստովանեսցուք զօրհնեալ եկեալն յանունն ան . ընդ
անն լիցուք ան , զի բովանդակ անձեղէնն հասցուք
չնորհաց ՚ի ձեռն մատակարարի սուրբ Հօգուոյն , որ
տայ առատապէս զարարչական չնորհն արժանաբար
հայցողաց . որ եկեալ բունեսցէ ՚ի մերում ժողովա-
րանս , և տաճարացուցէ զհօգի և զմարմնն , բնակա-
րան և օթեան սքջ Երրորդութեն կազմեսցէ : Աս
որոյ հասարակաց Հօր , և Արդւոյ միաճնի և կենագոր-
ծողի , և սքջ Հօգուոյն մատակարարի և պարզեաբաշ-
խի մշտնջենաւոր փառաբանուի մատուցուք այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

